


10. 08. 6

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԼՈՒՄԳՈՂԿՈՄԱՏ - ՈՒՍՈՒԹԵԱՆԵՐԻ ԿԱՅԱՐԵԼԱԴՈՐԾՄԱՆ
ԳԻՏԱ-ՄԱԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

ԱՎԱԳՅԱՆ ՄԱՆԻՄ

ՔԻՄԻԱՅԻ ԴԱՍԱՎԱՐՄԱՆ ԿԱՊԸ
ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՀԵՏ



ՅԵՐԵՎԱՆ

ԼՈՒՄԳԱՏ

1940

05 JUL 2010

24 JAN 2007

54(077)
6-77
Armenian
H 3-4819a

ՆԵՐԱԾԱԿԱՆ

«Քիմիայի դասավանդման կապը քիմիական արդյունաբերության հետ» թեման մշակելիս, ոգտվել եմ գլխավորապես հետևյալ աղբյուրներից.—

1) ՀամԿ(թ)Կ 18-րդ համագումարի և ՀԿ(թ)Կ 13-րդ համագումարի նյութերը.

2) Պրոֆ. Վ. Ն. Վերխովսկի՝ «Քիմիայի դասավանդման մեթոդիկան միջնակարգ դպրոցում».

3) Կ. Յան. Պարմանով՝ «Փորձեր եւեկտրական հոսանքով».

4) «Քիմիան դպրոցում» ամսագրերը:

Վերոհիշյալ գրականությունից ոգտվել եմ հետևյալ ձևով. գրականության մեջ այն մասերը, վորտեղ նկարագրված են հեղինակի կամ վորևել դասատվի գրական փորձը թարգմանել և աշխատության մեջ ոգտագործել եմ ամբողջովին:

ՀամԿ(թ)Կ 18-րդ համագումարի և ՀԿ(թ)Կ 13-րդ համագումարի նյութերից քաղել եմ հնգամյակների ընթացքում քիմիական արդյունաբերության նվաճումների առթիվ յեղած թվական տվյալները:

Վերխովսկու և Պարմանովի գրքերից վերցրել եմ ընդհանուր սկզբունքներ, վորի հիման վրա կառուցել եմ այս աշխատանքի համապատասխան գլուխները:

ՄԱՆԻԱ ԱՎԱԳՅԱՆ

15 հունիսի 40 թիվ

ԻՆՎ. № 17273



19.02.2013

«Քիմիական արդյունաբերությունը դարձնել արդյունաբերության առաջատար այն ճյուղերից մեջ, վորը լիովին բավարարի ժողովածության և յերկրի պաշտպանության պահանջները»:

Եերբորդ հնդամյակը քիմիայի հնդամյակ և Համագումարը վորոշում և քիմիական արդյունաբերության արտադրանքն ավելացնել 2,4 անգամ, այսինքն՝ զգալիորեն ավելի, քան ամբողջ արդյունաբերության աճումը»:

Համկ(բ)կ 18-րդ համադումարի բանաձեռից.

Միջնակարգ դպրոցում քիմիայի դասավանդման ընթացքում քիմիական արդյունաբերության և քիմիայի ուսուցման պրոցեսի միջև անհրաժեշտ կապի ստեղծումը բղխում և Համկ(բ)կ 18-րդ պատմական համագումարի դրույթից և ընկ. Մոլոտովի զեկուցումից նույն համագումարում: Խորհրդային կառավարությունը պահանջում է, վոր միջնակարգ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ ի վիճակի լինի կյանքում վորևե գործնական աշխատանք կատարելու Սրանից հետևում է, վոր դպրոցն իր ուսումնական վող աշխատանքները պետք ե վերակառուցի այնպես, վոր յուրաքանչյուր աշակերտ, դպրոցն ավարտելով և կյանք դուրս գալով, հարավորություն ունենամիշին վորակի աշխատողի տեղ գրավել քիմիական արդյունաբերության ցանկացած ճյուղում, ի վիճակի լինի արագ կերպով յուրացնելու քիմիական ֆարբիկա-գործարանային աշխատանքի տեխնիկան և մեթոդը, վոր աշխատանքային գործունեյության հենց առաջին որից կարողանա ճիշտ ընթացքը պահպանելով, կատարել այնպիսի հասարակ աշխատանքներ, ինչպիսին եղի, հողի անալիզը, կարողանա ուստագործել հասարակ ելեկտրական սարքավորումներ, քիմիական գործիքներ և այլն:

Քիմիայի ուսուցման պրոցեսում աշակերտը պետք ե ծանոթանական կառավանդության համապատասխան վորոշումներին առար-


կայի նկատմամբ, պետք ե իմանա քիմիական արդյունաբերության աճը և ԽՍՀՄ-ում, նրա դերը մեր յերկրի սոցիալիստական արդյունաբերության, գյուղատնտեսության և յերկրի պաշտպանության գործում, պետք ե ծանոթ լինի իր շրջապատում յեղած քիմիական արդյունաբերությանը, այնտեղ կատարված քիմիական պրոցեսների հիմնական սկզբունքներին, քիմիական հիմնական արդյունաբերություններին և կարևոր նյութերի ստացման արդյունաբերական յեղանակներին:

Այս խնդիրներն իրականացնելու համար անհրաժեշտ ե դատավանդման ընթացքում սիստեմատիկորեն պարզաբանել ԽՍՀՄ-ի քիմիական արդյունաբերության նվաճումները և կուակցության ու կառավարության վորոշումները քիմիական արդյունաբերության նկատմամբ: Քիմիայի դասատում պետք ե աշխատի յուրաքանչյուր որվա անցնելիք նյութը հարստացնել քիմիական արդյունաբերության նկատմամբ յեղած նոր տվյալներով, նոր փաստերով, նա պետք ե կարողանա աշակերտներին հասկանալի ձևով պարզաբանել քիմիական արդյունաբերության մասին յեղած վորոշումներն ու դրույթները և աշակերտներին կոնկրետ փաստերով համցողի, վոր քիմիական կուտուրայի և քիմիական արդյունաբերության բարձրացումը՝ դա կուակցության և կառավարության վորոշումների կատարումն ե:

Անհրաժեշտ ե դպրոցում լավ հիմքերի վրա դնել աշակերտական փորձի կազմակերպումը, վորի միջոցով աշակերտը կարող է ձեռք բերել կյանքում քիմիական արդյունաբերության մեջ գործնական աշխատանքներ կատարելու անհրաժեշտ ունակություններ: Լաբորատոր գործնական աշխատանքների ընթացքում պետք ե հաճախակի ուսուագործել ելեկտրական սարքավորումները, վորպեսզի աշակերտները ծանոթանան ելեկտրականության ուսուագործման հիմնական սկզբունքներին:

Անհրաժեշտ ե սիստեմատիկորեն աշակերտներին հանձնարարել կատարելու այնպիսի ձեռքի աշխատանքներ, վորոնք կապված են քիմիական արդյունաբերության հետ, որինակ՝ գործարանային սիստեմների գծագրումներ, մեքենայի վորևե մասի մոդելների պատրաստում; դիագրամների, սիստեմների կազմում և այլն:

Անհրաժեշտ ե հաճախակի կազմակերպել արտադրական երշսկուրսիա դեպի քիմիական արդյունաբերություն, քիմիական արդյունաբերության համար հոգի բազա հանդիսացող հանքավայրեր, քիմիական լաբորատորիա, թանգարան և այլն: Արդյու-



4030-87

նաբերական եքսկուրսիան հնարավորություն կտա աշակերտներին տեղում ծանոթանալու արդյունաբերական բարդ սարքավորումներին և քիմիական արդյունաբերության հիմնական սկզբունքներին:

Դասավանդման ընթացքում անհրաժեշտ ե ուստագործել քիմիական արդյունաբերություն պատկերող կինո նկարի ցուցադրում, վորը հնարավորություն կտա աշակերտներին ծանոթանալու քիմիական արդյունաբերության այն ճյուղերին, վորոնք չկան դպրոցի շրջապատում:

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԱՏԻԿ ՊԱՐՁԱՐԱՆՈՒՄԸ ՔԻՄԻԱՅԻ ԴԱՍԻՆ

ԽՍՀՄ-ում Ստալինյան յերեք հնգամյակի ընթացքում քիմիական արդյունաբերությունն աճել է աննախընթաց շափերով:

Ներկայումս մեզ մոտ Մենդելյեվի ալյուստակի 92 ելեմենտից ուստագործվում է 80-ը՝ նախահեղափոխական նոուսաստանի 20 ելեմենտի փոխարեն; Միաժամանակ լուրջ պիտահետազոտական աշխատանք է գնում այդ ցանկն ավելի ևս լրացնելու ուղղությամբ:

Հետզհետե ավելի յեն ընդարձակվում քիմիական արդյունաբերության հոմոլոցի բազաները, և քիմիան դառնում է ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերից մեկը:

Հնկ. Ստալինը առաջին հնգամյակի արդյունքներն ամփոփելու ժամանակ ասում եր. «Մենք շոնէինք լուրջ քիմիական արդյունաբերություն, այժմ ունենք այն»: Այստեղից պարզ է, վոր քիմիական արդյունաբերության հիմքը դրվել է Ստալինյան առաջին հնգամյակի ընթացքում: Յերկրորդ հնգամյակի ընթացքում քիմիական արդյունաբերությունն աճել է յերեք անգամ՝ տալով 6 միլիարդ ուռելու արտադրանք: Հիմք է դրվել արդյունաբերության նոր ճյուղերի, ինչպես՝ արհեստական պարարտանյութերի, արհեստական թելի արդյունաբերության, վոր մեծ մասամբ կապված է որդանական սինթեզի և ցելուզոլայի արդյունաբերության հետ. արհեստական ներկերի, կաշվի, ճարպերի հիգրոֆենիզացիայի, պլաստմասսաների, ֆարմացեվտիկ, վոսկի մշակման, պարֆյումերային, անտառաքիմիական շինանյութերի, համաձուլվածքների, սինթետիկ կառուցուկի և այլն:

Հնգամյակների ընթացքում հիմք է դրվել նաև Հայաստանի քիմիական արդյունաբերությանը: Առաջին և յերկրորդ հնգամյակների ընթացքում գործի յերվել 25 նոր ձեռնարկություն, վորոնց թվին են պատկանում քիմիական արդյունաբերության հետևյալ ճյուղերը՝ կիրովականի քիմ. կոմբինատը, կարբիդի գործարանները, Ալավերդու պղնձարջասպի գործարանը. ընդհանուր արտադրանքը յերկրորդ հնգամյակի ընթացքում աճել է յերեք անգամ: 1939 թվից գործի յերվել սինթետիկ կառուցուկի (Սովորեն) կոմբինատը, վորի համար հումուլի բազա յեն հանդիսանում Դավալվի կրաքարի հանքերը: Սովորենից պատրաստած ավտո շիներն աշքի յեն ընկնում իրենց դիմացկունությամբ, այդ շինով աշխատող ավտո մեքենան 30 հազար կիլոմետր անցնելուց հետո՝ շինը մնում է անվնաս:

Յերկրորդ հնգամյա պլանը նախատեսում է քիմիական արդյունաբերության հսկայական աճ. 1942 թվին յերկրորդ հնգամյակի վերջում քիմիական արդյունաբերության արտադրանքը պետք է հասնի 14 միլիարդ ուռելու, վոր 1937 թ. համեմատությամբ կազմում է 237%-ը, այսինքն 2,4 անգամ ավելի, քան յերկրորդ հնգամյակի վերջում:

Այդ տարիների ընթացքում հսկայական շափով պետք է գարգանա ՍԿ-ի արդյունաբերությունը: Նախատեսված է կառուցել շատ ՍԿ-ի նոր գործարաններ: ՍԿ-ի արդյունաբերությամբ ԽՍՀՄ-ն առաջին տեղն է բռնելու ամբողջ աշխարհում:

Յերկրորդ հնգամյակում քիմիական արդյունաբերությունը պետք է դառնա ժողովրդական տնտեսության առաջատար ճյուղերից մեջը. «Արագ կերպով առաջ մղել քիմիական արդյունաբերության և ժողովրդական տնտեսության քիմիզացիան, վորի համար մենք ունենք անսահմանափակ հնարավորություններ և ամենալավագույն հեռանկարները»:

(Սոլոտով — զեկ. Համկ(թ)կ 18-րդ համագումարում, եջ 39):
Քիմիական արդյունաբերությունը պետք է ուստագործի տեխնիկայի բոլոր նորաձևությունները՝ հատկապես տեխնոլոգիական պրոցեսների և այդ պրոցեսները ինտենսիվիկացիայի յենթարկելու ուղղությամբ: Այս խնդիրն իրականացնելու համար անհրաժեշտ է, վոր քիմիական արդյունաբերությունն ուստագործի ավելի բարդ սարքավորումներ և ապարատներ: Այս մասին ընդգծված է Համկ(թ)կ 18-րդ համագումարի բանաձևում, — «Ուժեղացնել քիմիական արդյունաբերության համար բարդ ապարատուրաների և սար-

քավորումների արդյունաբերությունը և լիովին ապահովել քիմիա-կան արդյունաբերության հզոր աճումը»:

Դեռևս 17-րդ կուս. կոնֆերանսի կողմից բնդգծված ե հիմնա-կան քիմիական արդյունաբերության խոշոր նշանակությունը սո-ցիալիստական արդյունաբերության, գյուղատնտեսության ինդուստ-րացման և յերկրի պաշտպանության համար.— «Լիովին լիկվիդա-ցիայի յենթարկել ժողովրդական տնտեսության զարգացման տեմ-պերից յետ մնալը, առանձին ուղադրություն դարձնել հիմնական քիմիայի զարգացման վրա և առաջին հերթին՝ պարարտանյութե-րի արդյունաբերության վրա, վորի համար ապահովել գործարան-ների վերասարգավորումը և նոր շինարարության ծավալումը»:

Հիմնական քիմիական արդյունաբերություն ասելով ամենից առաջ պետք ե հասկանալ այս նյութերի արդյունաբերությունը՝ վորոնք հանդիսանում են յելանյութ քիմիական արդյունաբերու-թյան զանազան ճյուղերի համար: դրանց թվին են պատկանուած թթումների հիմքերի, սոդայի, ամոնյակի, մետաղների արդյունա-բերությունը և այլն:

Հիմնական քիմիական արդյունաբերության համար ԽՍՀՄ-ում կան բնական հումուզի անսպառ աղբյուրներ, ինչպես որինակ-մետաղահանքեր, փոսֆորիտներ, քլորիդներ, սովֆիդներ, նիտրատ-ներ, քարածուխ, նավթ, բնական գազեր և այլն:

Ցերորդ հնդամյակի ընթացքում ե'լ ավելի պետք ե ընդար-ձակվեն քիմիական արդյունաբերության հումուզի բազաները՝ մի կողմից՝ ընդարձակելով հումքի հանդույթը, մյուս կողմից՝ ավելի լրիվ ոգտագործելով արտադրության թափթփուկները:

Քարածուխը, նավթը, բացի յերկրին ջերմային եներգիա մա-տակարարելուց, հանդիսանում են նաև քիմիական արդյունա-բերության համար հումուզի հարուստ աղբյուրներ: ԽՍՀՄ-ում կան քարածուխի հարուստ հանքավայրեր, գրանի թվին և պատկանուած դոնի ավազանը (Ուկրաինա), վորանեղ հանքավայրը բոնում ե 25 հազար ք. կմ. տարածություն և ունի 90 միլիարդ տոնն պաշար: Կորնեցկի ավազանը, վորի պաշարը հասնում է 450 միլիարդ տոննի և տալիս ե ամբողջ քարածուխի պաշարի 0,3 մասը, Կա-րագանդայի ավազանը (Ղազախստան), վոր ունի 50 միլիարդ տոնն պաշար, Մերձմուկովյան ավազանը և ապա Ուրալում Կի-գելովսկի և Չելյաբինսկի հանքերը: Քարածուխի ընդհանուր հա-նույթը 1937 թվին յեղել ե 127,8 միլիոն տոնն, իսկ 1942 թվին պետք ե հասնի 243 միլ. տոննի:

Նավթի պաշարի քանակով ԽՍՀՄ-ը բռնում է առաջին տեղը, իսկ հանույթի քանակով, յերկրորդ տեղը: Նավթի գիշավոր հան-քավայրերն են Կովկասը—Բագրու, Գրոզնի, Մայկու, այնուհետեւ Տաման—Կերչում, Եմրա—Ղազախստանում, Թուրքմենստան, Ռու-բեկստան, Բաշկիրիա, Ուրալ, Սախալին և այլն: 1937 թվին մեզ մոտ արտադրվել ե 30,5 միլիոն տոնն, իսկ 1942 թվին արտա-դրվելու յե 54 միլիոն տոնն: Նավթի վերամշակումից ստացվում է բենզին, կերոսին, մազութի: Նավթի կրեկինդի միջոցով ստացվում են ածխաջրածնային փոքր շղթա ունեցող նյութեր, գազային և էնդուկ կիսապողուկտներ և այլ արժեքավոր նյութեր: Նավթից ստացվում են նաև արօմատիկ ածխաջրածններ, վորոնք անհրա-ժեշտ են ներկերի, գեղանյութերի սինթեզի համար: Նավթային գազի ոգտագործումն ապահովում է մեր յերկրին անհրաժեշտ քա-նակի ֆորմալինով, սպիրուլ, թթումերով և այլ անհրաժեշտ նյու-թերով: Կորսից և քարածուխից ստացված նյութերը նույնպես հանդիսանում են քիմիական արդյունաբերության ամենաարժեքավոր հումուզի: Ինչպես հայտնի յե, քարածուխից կոքսացման պրոցեսի ընթացքում ստացվում է քարածուխային խեժ, հում բենզոլ, կոքսա-յին գազ, ամոնիակ և այլն, իսկ այնուհետև հում բենզոլի մշա-կումից ստացվում է բենզոլ, տոլու, քսիլոլ, ֆենոլ, և այլն Կոքսային գազի մշակումից ստացվում է ացեթիլեն, վորը հու-մուզի և հանդիսանում նոր տեսակի կառուցուկի արդյունաբերության համար (սովպրեն, դյուպրեն, բունա): Նույն պրոցեսի ժամանակ ստացվում են նաև ջրածնի, ածխածնի ոքսիդ, վորոնց միացումից ստացվում է ֆորմալդեհիդ:

Քիմիական արդյունաբերության համար վորպես հումուչի աղբյուր ոգտագործվում են զանազան արդյունաբերություններից ստացված թափթփուկները: Այդ մասին դեռևս իր ժամանակին խոսել եւ Կարլ Մարքսը իր «Կապիտալ» աշխատության մեջ:

«Թափթփուկների ոգտագործման շատ ավելի փայլում որինակ տալիս ե քիմիական արդյունաբերությունը. նա ոգտագործում ե վոլ միայն իր արդյունաբերության թափթփուկները՝ գտնելով նրանց համար նոր կիրառում, այլ նաև շատ ուրիշ արդյունաբերու-թյան թափթփուկներ յենթարկում է ձեվափոխման, որինակ՝ քա-րածուխային խեժը, վոր ոգտագործվել ե անիլինային ներկեր և ալի-գարին ստանալու համար, վերջերս ոգտագործվում է դեղորայք ստանալու համար» (Կապիտալ, հատոր 3, մաս 8):

Քիմիական արդյունաբերության թափթփուկների ոգտագործու-

մը հնարավոր ե միայն սոցիալիստական արդյունաբերության մեջ՝ վորտեղ հիմք ե զրկել արդյունաբերության կոմբինացմանը և վորտեղ քիմիական արդյունաբերությունը զինված ե տեխնիկայի նորագույն նվաճումներով։ Այսպես որինակ՝ նկալում՝ գործող պղնձահանքի նախկին գործարանում արդյունաբերության պրոցեսում կորչում եր հանքանյութի մեջ գտնված 30% ծծումբը, վորը ծծմբային գազի ձեփով անցնում եր ողի մեջ և փշացնում շրջապատի բուսականությունը այն պայմաններում, յերբ մի քանի միլիոն սուբլի վուկի դրամ ուղարկվում եր արտասահման՝ այնտեղից ներմուծված ծծմբական թթվի դիմաց։ Նույն գրությունն ե նաև մեզ մոտ Հայաստանում Ալավերդու պղնձաձուլական գործարանում, Կիրովականի քիմիական կոմբինատում և այլն։ Քիմիական արդյունաբերության մեջ յերեմն թափթփուկների արժեքը բարձր է լինում հիմնական արտադրության արժեքից, որինակ՝ 1 տոնն պղնձաստանու համար հարկավոր ե ունենալ 67—70 տոնն պղնձի կալչեդանից ստացվում ե 80 տոնն ծծմբական թթու։ Վերջինս թափթփուկն ե, բայց արժեքը 3—4 անգամ բարձր ե հիմնական պրոդուկտի պղնձի արժեքից։ Մի տոնն պղնձն արժե 500 ռ., իսկ 80 տոնն ծծմբական թթուն՝ 2000 ռուբլի։

Դոնբասում կոքսի մշակման ընթացքում ողի մեջ ելին անցնում արժեքավոր ցնդող նյութեր, կորչում եր քարածխային խեժը, սակայն ներկայումս հնարավորություն ե ստեղծվել հավաքել նրանց և քիմիական վերամշակման յենթարկելով ստանալ հարյուրավոր թանգարժեք նյութեր։ Ոգտագործվում ե նաև դոմնային վառարաններից ստացված խարամը, վորի վերամշակումից ստացվում ե բարձրորակ ցեմենտ, իսկ յերկաթահանքերի մի քանի այլ տեսակների խարամի հետագա վերամշակումից ստացվում են արժեքավոր մետաղներ, ինչպես՝ Va, Ti, Co և այլն, վորոնք մտնում են բարձրորակ պողպատների բաղադրության մեջ։ Սյս բոլորից յերեսում ե, վոր ժամանակակից մետաղուրդիական գործարանները հանդիսանում են բարդ մետաղուրդիական կոմբինատներ։ Այնտեղ շուգունի ստացման պրոցեսը հանդիսանում ե նույնպես ամոնիակի սխնթեզման լավագույն միջոց։ Յերբ դոմնային վառարանը ներս են փշում թթվածին, ներսում առաջանում ե ազոտի և ջրածնի խառնուրդ, վորից ստացվում ե ամոնիակ։ Մեկ տոնն շուգունից ստացվում ե կեսից մինչեւ մեկ տոնն ամոնիակ։ Թթվածին ներս փշելով՝ հնարավորություն ե ստեղծվում ստանալու։

յուրաքանչյուր տոնն պողպատի ստացման պրոցեսից 200 կիլովատ էլեկտրո-էներգիա, վոր ոգտագործվում ե ամոնիակի սինթեզի համար։ Այնուհետեւ կավից և սոլիկամի աղերի թափթփուկներից— ստացվում են այնպիսի արժեքավոր մետաղներ, ինչպիսին են ալումինիումը և մագնիումը։ Թերթաքարերից, նավթից, տորփից և քարածուխի աղքատ տեսակներից ստացվում են սպիրտ, թթուներ, կառուզուկ, ներկեր, գեղանյութեր, լուծիչներ, բնական գազերից՝ ֆորմալին, կրից և ածխածնից՝ կալցիում կարբիդ, ացեթիլեն, վոր իր հերթին հումուզ ե հանդիսանում հսկայական թվով կիսապրոցուկտներ ստանալու համար։

Մեզ մոտ Հայաստանում ես լուրջ դրված ե արդյունաբերության թափթփուկների ոգտագործման խնդիրը. ոգտագործվում ե Ալավերդու պղնձաձուլական գործարանից արտադրված ծծմբային գազը. գործարանին կից կառուցվում ե պղնձարջասպի նոր գործարան և նախկին գործարանը լինեածվում ե կոմբինատի։ Ոգտագործվում են նաև Կիրովականի քիմիական կոմբինատի կառեհղի գործարանի թափթփուկները, վորոնցից պատրաստվում ե քացախաթու պլաստմասսա և այլն։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՔԻՄԻԱԿԱՆ ՄՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻՆ ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ԽՆԴՐՈՒՄ

Քիմիական արդյունաբերության հիմունքներին ծանոթանալու և այդ արդյունաբերության մեջ աշխատանքի ունակություններ զարգացնելու ամենալավագույն և արժեքավոր միջոցը դա քիմիական բազմատեսակ է բազերիմենտի կազմակերպումն ե միջնակարգ դպրոցում։ Քիմիական եքսպերիմենտի մյուս տեսակների հետ միասին պետք է հատուկ ուշադրություն դարձնել աշխատական ինքնուրույն գործնական աշխատանքներին՝ լաբորատոր աշխատանքներին և աշակերտական պրակտիկումն։

Աշակերտական լաբորատոր գործնական աշխատանքների կազմակերպման մեթոդների մասին ունենք մեթոդական հարուստ գրականություն և յերկարամյա դպրոցական փորձ։ այս խնդրում նորը դա աշակերտական պրակտիկումի կազմակերպումն ե դպրոցում։

Աշակերտական պրակտիկումը՝ կաված դպրոցի լաբորատոր սարքավորման հետ՝ կարող ե կազմակերպվել տարբեր ձեերով։ Յեթե լաբորատորիան հարուստ ե և բավարարում ե դասատվե-

պահանջներին, կարելի յե ծրագրային նյութի յուրաքանչյուր կարեվոր կետ անցնելուց հետո կազմակերպել աշակերտական պրակտիկում: Յեթե լաբորատորիան ավելի պակաս ե կահավորված և զգացվում ե նյութերի կարիք, կարելի յե այն կազմակերպել յուրաքանչյուր թեմա անցնելուց հետո: Խսկ յեթե լաբորատորիան ավելի աղքատ ե, ապա աշակերտական պրակտիկում կարելի յե կազմակերպել քառորդների վերջում: Այս դեպքում պետք ե քառորդում անցած թեմաներից ընտրել ավելի կարելոր խնդիրներ և հանձնարարել աշակերտներին կատարելու:

Աշակերտական պրակտիկումը պետք ե կազմակերպել քիմիայի դասաժամերի ընթացքում ի հաշիվ աշակերտական լաբորատոր աշխատանքների և դեմոնստրացիոն փորձերի: ուսցիունալ կատարման: Այս տիպի աշխատանքները չափազանց մեծ նշանակություն ունեն աշակերտների անհատական կարողությունների զարգացման խնդրում և կարող են մեծ արդյունքներ տալ այն ժամանակ միայն, յերբ լավ նախապատրաստված և կազմակերպված տարրի: Այդ տեսակետից ամենանպատակահարմարն այն ե, վորդասատուն նախորոք տվյալ հարցի կամ թեմայի շուրջը գրավոր առաջադրություն կազմի և հանձնի աշակերտներին կատարելու դրավոր առաջադրությունները պետք ե հարմարեցնել աշակերտների տեսական պատրաստականությանը և գործնական աշխատանքներ կատարելու ունակություններին: Հետեւապես տարբեր դասաւրաների աշակերտների համար՝ անհաջարությունները պետք ե հարմարեցնել աշակերտների տարբեր ձեվով: Որինակ: 7-րդ դասարանի աշակերտների համար առաջադրված հարցերը պետք ե լինեն կոնկրետ, սակայն ավելի յերկար պետք ե լինեն փորձի կատարման տեխնիկայի և սարքավորման նկարագրությունները, իսկ վերջին դասարանի աշակերտներին տրվելիք առաջադրությունները պետք ե կազմված լինեն այնպես, վոր ավելի գերակշռեն ինքնուրույն աշխատանքի տարրերը: Աշխատանքը պետք ե կազմակերպել այնպես, վոր հետզետե աշակերտները վարժվեն ինքնուրույն կերպով փորձերը սարքավորելու և կատարելու Աշակերտները նախորոք պետք ե իմանան, թե առաջիկայում ինչ գործնական աշխատանքներ պետք ե կատարեն, վորի համար պետք ե տանը կրկնեն դրի համապատասխան պարագրաֆները և ուսումնասիրեն՝ դասաւովի տրված գրավոր առաջադրությունները:

Աշակերտական պրակտիկումի ընթացքում, յեթե դասարանի բոլոր աշակերտները կատարելու յեն նույն առաջադրանքը, տպա-

կարելի յե դասի, սկզբում, նախատանքն սկսելը տալ ընդհանուր ցուցմունքներ, ցուց տալ նախազգուշական միջոցառումներ, նշել փորձի առանձնահատկությունները և դրանից հետո թույլ տալ, վոր բոլոր աշակերտները միասին սկսեն աշխատանքը: Աշխատանքն սկսելուց հետո դասատում պետք ե մոտենա առանձին աշակերտների և դիտի փորձի կատարումը: Անհրաժեշտ և հաճախակի մոտենալ այն աշակերտներին, վորոնց մոտ փորձի կատարման ունակություններն ամելի քիչ են զարգացած և վորոնց պատրաստականությունը տվյալ առարկայից ընդհանուր առմամբ պակաս ե, ուստի և կարող են դժվարանալ ինքնուրույն կերպով փորձեր սարքավորել, դիտել և ինքնուրույն յեզրակացություն հանել: Յեթե լաբորատորիան աղքատ և կահավորված և հարավորություն չկա, վոր ամբողջ դասարանի աշակերտները միաժամանակ նույն փորձը կատարեն, ապա պետք ե տվյալ թեման անցնելուց հետո կազմել տարբեր հարցերի շուրջը մի քանի առաջադրություն և տալ աշակերտներին, վորպեսզի հերթով կատարեն: Այս դեպքում ևս դասի սկզբում պետք ե համառոտ բացատրություն տալ բոլոր փորձերի նկատմամբ՝ այն ձեմով, ինչպես նշված ե վերեվում:

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՀՈՍԱՆՔԻ ՌԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԼԱԲՈՐԱՏՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

Քիմիական արդյունաբերության համար ելեկտրոքիմիան շատ կարևոր դեր ունի: Ներկայամս ելեկտրական հոսանքի ողտագործման միջոցով ստացվում են մի շաբթ շատ կարելոր մետաղներ, ինչպես՝ պղինձ, ցինկ, ալումին: Ելեկտրոլիդները միջոցով կատարվում ե պղնձի, արծաթի, վուկու ու գույնին աշխատանքի մեջ գործածություն ունի ելեկտրոսեխնիկայում, ելեկտրոդոմանաներում, վորտեղ ներկայումս ստացվում ե յերկաթը: Ելեկտրականությունը մեծ նշանակություն ունի նաև հատուկ պղղպատների ստացման և գանազան նյութերի ելեկտրոլիդի համար:

Ելեկտրոքիմիայի զարգացման մեջ մեծ դեր ե կատարել 1892թ. Մուսասանի գյոււրը: Նրա համաձայն նոր տեսակի վառարանում հաջողվում ե ստանալ կալցիում կարբիդ, արհեստական թանգարանի գարեր՝ ուրիշներ, կարբորամիդ, մաքրու մոլիբդեն, վոլֆրամ և այլն: Ելեկտրական հոսանքի աղղպատների ստացման են գոս-


ֆասներից՝ փոսթոր, ածխածնից՝ ծծմբածխածնին, կալցիտմ ցիանամիդ և այլն: Այսուհետեւ ստացվում են մի շարք կարելոր նյութեր և ռեակտիվներ, ինչպես՝ բերտոլետյան աղ, կալիում պերմանգանատ, ալկալիներ, թթվածին, քոր և այլն:

Վերջին տարիներս քիմիայի մեջ ելեկտրական հոսանքի ոգտագործումը մեծ ծավալ է ստացել: Կոլտյան աղեղի միջոցով կատարվում է յուղերի և ճարպերի հիդրովենիգացիան: Ելեկտրական հոսանքի ոգնությամբ կատարվում է նավթի կրեկինգը: Արդյունաբերության մեջ ելեկտրականության ոգտագործման մասին ճիշտ գաղափար տալու համար, կարելի յե քիմիայի դասին լաբորատոր աշխատանքների թվում կատարել այնպիսի աշխատանքներ, վորոնք կապված են ելեկտրական հոսանքի ոգտագործման հետ: Նման փորձերի կատարումն ունի նաև տեսական խոշոր նշանակություն, վորովհետեւ այդ փորձերի ընթացքում աշակերտները համոզվում են ատոմների և մոլեկուլների ունակ գոյության մասին, վորն ոգնում է աշակերտների մատերիալստական աշխարհայացքի կազմակերպմանը: Վերցնենք նման տիպի յերկու աշխատանք 7-րդ դասարանի դասընթացից՝ զրի ելեկտրոլիցը:

ԶՐԻ ԵԼԵԿՏՐՈԼԻՋԸ

Ելեկտրական հոսանքով զրի ելեկտրոլիդ կատարելու համար՝ վորպես ելեկտրական հոսանքի աղբյուր կարելի յե ոգտագործել լեկանշեյի ելեմենտը, վորից յեթե 3—4 հատ հաշորդաբար միացնեք, կստացվի ելեկտրական եներգիայի այն քանակը, վոր անհրաժեշտ է զուրը քայլայելու համար: Լեկանշեյի ելեմենտը նպատակահարմար է նրանով, վոր հեշտ է ձեռք բերվում, ունի հասարակ կազմություն և ծանոթ է աշակերտներին ֆիզիկայի դասընթացից:

Զրի ելեկտրոլիցը կատարվում է ընդհանրապես Հոֆմանի ապարատի միջոցով, իսկ յեթե դպրոցում այդ ապարատը չկա, կարելի յե այն փոխարինել շատ հասարակ սարքավորումով, վորը պատկերված է № 1 գծագրում:



№ 1

№ 1 սարքավորումը ներկայացնում է մի բանկա, վորը դրված և շտափվին ամրացված ողակի վրա. բանկայի ցածի մասը ամրացված է խցանով, իսկ խցանի մեջ՝ վորպես ելեկտրոլ ամրացված է յերկու թիթեղյա լար, վորոնցով միացած ելեկտրական հոսանքին: Վորպես ելեկտրո-

լիու վերցնում են 10—15 տոկոսանոց կծու հիմքի կամ սողայի յուծույթ: Կատարվում է հետեւյալ սեակցիան


- 1) $\text{Na}_2\text{CO}_3 \rightleftharpoons 2 \text{Na} + \text{CO}_3$
- 3) $2 \text{CO}_3 \rightleftharpoons 2\text{CO}_2 + \text{O}_2$
- 2) $2 \text{Na} + \text{H}_2\text{O} \rightleftharpoons 2\text{NaOH} + \text{H}_2$
- 4) $\text{Na}_2\text{CO}_3 + \text{H}_2\text{O} + \text{CO}_3 \rightleftharpoons 2\text{NaHCO}$

Մեակցիայի ընթացքում առաջացած ածխաթթու գազը զրի և սողայի հետ միանալով՝ առաջացնում է թթու աղ, հետեւապես անողուած առանձնանում է միայն թթվածին. ստացված գաղերը պետք ե հավաքել բաժանմունքներ ունեցող փորձանոթի մեջ: Փորձանոթի մեջ հավաքելուց հետո, գազի ծավալը պետք է նշանել մոմային մատիտով: Յերբ դասատուն հարկ համարի ընդհատել ունակցիան, պետք է անջատի ելեկտրական հոսանքը և մատը դնելով փորձանոթի բերանը գեպի վեր և այնտեղ յեղած գաղերը փորձի վառած մոմով կամ մարխով: Յեթե վերցրած փորձանոթը բաժանմունքներով չե, գաղերի ծավալը իմանալու համար, գազը ոգտագործելուց հետո փորձանոթի մեջ պետք է մենզուրից զուր լցնել մինչև մոմով գծած տեղը: Այս փորձի ընթացքում աշակերտներն առաջնանգան համապարհով ուսումնասիրում են բարդ նյութերը: Այսպիսով նրանք համոզվում են, վոր բարդ նյութը կազմված է մեկից ավելի նյութերից՝ կերակրի աղի բաժանել իր բաղադրիչ մասերին: Աշակերտները փորձի սկզբից կարող են իմանալ, վոր փորձի արդյունքը պետք է լինի 2 տարբեր գազի ստացումը, վորոնց կարելի յե հավաքել փորձանոթում և հատկությունները ուսումնասիրել:

Այս փորձը մասամբ հետազոտական բնույթ ունի: Աշակերտները կարող են այդ աշխատանքը կատարել ողակներով, և վերցում հանել այն ընդհանուր յեղակացությունը, թե զուրը կազմված է յերկու գաղեց՝ զրածնից և թթվածնից, վոր զրածին իր ծավալով յերկու անգամ շատ է թթվածնից: Սիալ և ասել, վոր զուրը կազմված է յերկու ծավալ զրածնից և մեկ ծավալ թթվածնից, վորովհետեւ զուրը թթվածնի և զրածնի քիմիական միացությունն է և վոր թե այդ գաղերի խառնուրդը, հետևապես զրի մեջ առանձին զրածին և թթվածին չկա: Պետք է ասել՝ զրի քայլայումից առաջանակ ունի յերկու ծավալ զրածին, մեկ ծավալ թթվածին:

ԿԵՐԱԿՐԻ ԱՂԻ ԵԼԵԿՏՐՈԼԻՋԸ

Այս աշխատանքը նույնպես կարելի յե կատարել Հոֆմանի ապարատով, սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, վոր




№ 2

քլորը լավ լուծվում ե ջրի մեջ, ուրեմն քանի դեռ ելեկտրոլիթը չի հագեցել քլորով, գազային քլոր չի անջատվի Այս հանդամանքը կարող ե յերկարացնել փորձի բնթացքը, ուստի զրա փոխարեն կարելի յն վերցնել մի այլ ապարատ, վորը ներկայացված ե № 2 գծագրում:

Այս ապարատը տարբերվում է չոփմանի ապարատից նրանով, վոր ներսից ունի մի նեղ խողովակ, վորը ցածի մասում պահում ե զրական ելեկտրոդը, վորի վրա առանձնանում ե քլորը: Շնորհիվ այն հանդամանքի, վոր այդ խողովակի մեջ ջուրը քիչ է, նրա հագեցումը քլորով կատարվում ե արագությամբ, և գազային քլորի անջատումն արագանում ե: Յերկուշերեք ըունի անց գազային քլորը սկսում ե հավաքվել խողովակի վերին մասում՝ լուծույթի վրա: Ապարատն ունի նետելված կառուցվածքը. փայտապահիչի վրա ամրացված ե 3 ուղղահայաց և մեկ լայնական խողովակ: Մեջտեղի խողովակը վերջանում ե գնդաձեվ մասով, վորը ձագարի դեր ե կատարում, ժայրի խողովակները վերելում ունեն ծորակներ, իսկ ցածում անցքեր, վորոնցում տեղավորված են խցանի վրա ամրացված ածխի ելեկտրոդներ, վորոնցով ապարատը միացած է ելեկտրականության աղբյուրին: Ապարատը լցվում ե կերակրի աղի կոնցենտրիկ լուծույթով այնպես, վոր խողովակները մինչեվ ծայրերը լցվեն և վոչ մի գագի բշտիկ ներսում շմա: Ապարատը սարքավորելուց հետո հոսանքը միացնում են (հոսանքի ուժը պետք ե լինի 4—10 վոլտ): Նեակցիայի սկսվելը դիտելի յե դառնում գագային քլորի բժտիկների անջատման հետեւ վանքով, բշտիկներն անջատվում են նախ անողի վրա, իսկ քիչ ժամանակից հետո հավաքվում են խողովակի մեջ: Կատողի վրա պետք ե հավաքվի կծու նատրիումը, վորի ներկայությունը կարելի յե հայտնաբերել ֆենոլֆտալինի լուծույթով: Նույն խողովակում հավաքվում ե նաև ջրածին, վորը կարելի յե հավաքել վերնի ծորակը բաց թողնելով: Ապարատը կարող ե աշխատել յերկար ժամանակ, սակայն անհրաժեշտ ե վորոշ ժամանակամիջոցից հետո բացանել ծորակը և դուրս թողնել վորի հոսանքը: Կերակրի աղի ելեկտրոլիդի սխեման կարելի յե պատկերացնել հետևյալ ձևով:


Քլորը լավ լուծվում ե ջրի մեջ, ուրեմն քանի դեռ ելեկտրոլիթը չի հագեցել քլորով, գազային քլոր չի անջատվի Այս հանդամանքը կարող ե յերկարացնել փորձի բնթացքը, ուստի զրա փոխարեն կարելի յն վերցնել մի այլ ապարատ, վորը ներկայացված է № 2 գծագրում:

Այս ապարատը տարբերվում է չոփմանի ապարատից նրանով, վոր ներսից ունի մի նեղ խողովակ, վորը ցածի մասում պահում ե զրական ելեկտրոդը, վորի վրա առանձնանում ե քլորը: Շնորհիվ այն հան-



№ 3

Ելեկտրոդները կարելի յե վերցնել ածխածին, իսկ ելեկտրական հոսանքը՝ 4-10 վոլտ ուժով: Այստեղ կատարված սեակցիան կա-



№ 4

Նատրիումի ամալգամը մտցնելով ջրի մեջ անջատվում ե ջրածին և գծունատրիում, վորո կարելի յե հայտաբերել ջրի մեջ կաթեցնելով մի քանի կաթիլ ֆենոլֆտալինին:

ԶԵՐՔԻ Ս.ՇԽԱՆՔՆԵՐ

ԽՍՀՄ-ի քիմիական արդյունաբերության հիմունքներն ուսումնասիրելու և նրա նվաճումները յուրացնելու միջոցներից մեկը քիմիայի դասավանդման ընթացքում աշակերտներին սիստեմատիկորեն ձեռքի աշխատանքներ հանձնարարելն ե: Ձեռքի աշխատանքների մեջ մտնում են զանազան նյութերի ստացման գործադրանային յե զանակների սխեմաներ գծագրելը, աղուսակներ և կորեր գծելը, մոդելներ պատրաստելը և այլն: Այս տիպի աշխատանքները հեշտացնում են նյութի յուրացումը և լայնացնում աշակերտի մտահորիզոնը արտադրության տվյալ ճյուղի նկատմամբ:

Յեթե աշակերտը հանգամանորեն տալիս ե ծծմբական թիմի ստացման կամերային և կոնտակտային յեղանակի գծագրիր, ապա նա հեշտությամբ պատկերացնում ե գործարանի առանձին ցե-



ՀԱՅՈՎԵՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅՈՎԵՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅՈՎԵՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅՈՎԵՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ

403087

խերի հաջորդականությունը, յուրաքանչյուր մասի արտաքին ձեւը՝ կազմությունը, ներքին կառուցվածքը, աշխատանքի բովանդակությունը և այլն: Գծագրելուց հետո աշակերտը վոլ միայն կարող է սահուն կերպով պատմել այդ թեմայի մասին, այլև նրա պատահանը կլինի ավելի գիտակից, խորացված և ուսումնագրիված: Գծագրման ժամանակ հանդես են գալիս աշակերտի գգայրաններից մի քանիսը— մոտորական, տեսողական, ուստի և յուրացումն ավելի բարձր է լինում:

Գծագրումները պետք են կատարվեն առանձին տեսրերում և պահեն մինչև ուսումնական տարրա լեռը: Տրդ դասարանի աշակերտներին կարելի յե հանձնարարել աղաթթվի ստացման գործարանային յեղանակի գծագրը, ծծմբական թթվի, ամոնիակի, իսկ Գրդ դասարանի աշակերտներին՝ մետաղածուկական մասրանների գծագրերը:

Աշակերտներին պետք են հանձնարարել յերբեմն նաև զանազան մոդելներ պատրաստել: Այդ միջոցով նրանք նախ կծանոթանան նյութերի (կավ, աղյուս, փայտ, ապակի) հատկություններին, յերկրորդ՝ այս աշխատանքները կոժանդակեն աշակերտներին յուրացնելու գործարանի տվյալ մասի ձեւի և աշխատանքի յուրահատկությունը:

Այս տիպի աշխատանքների թվում ամենակարևորը գիտագրամանների և աղյուսակների կազմումն են և քիմիական արդյունաբերության նվաճումները պատկերող պատի թերթի լույս ընծայումը: Քիմիական արդյունաբերության զանազան ճյուղերում ունեցած նվաճումները պատկերող գիտագրաման մեծ նշանակություն ունի աշակերտների գիտելիքների մակարդակը բարձրացնելու տեսակետից: Նախ գիտագրամ կազմելու համար աշակերտը պետք է հավաքի թվական տվյալներ, ապա՝ ոգտագործի այդ տվյալները: Այսպիսով նա կսեփականացնի այդ թվերը, վոր խոշոր նշանակություն ունի նրա գիտական մակարդակը բարձրացնելու խընդում:

Գիտագրամների կազմումն ավելի հետաքրքիր գարձնելու համար պետք են խուսափել կազմելու ձեւի միորինակությունից: Զպետք են աշակերտներին հանձնարարել գիտագրամներ. կազմել միշտ ուղղահայաց գծով և աղյուսակներով: Կարելի յե վորոշ գեղարվեստական ձևավորում մտցնել. որինակ, յեթե կազմում են ծծմբական թթվի ստացման աճի գիտագրամք:

Կարելի յե ոգտագործել ծծմբական թթվի ստացման աշխարհական կազմում են պղնձի ստացման աճի դիագրամը, կարելի յե նկարել պղնձի կտորներ: Յեթե կազմած դիագրամները համապատասխան բացատրության վորոշումներով և առաջնորդների ցիտատներով լրացվեն ու ամփոփվեն մի թղթի վրա, այդ կդառնա գեղեցիկ պատի թերթ, վորը կարտացովի մեր քիմիական արդյունաբերության աճը: Այս տիպի աշխատանքների լավագույն նմուշները կարող են ոգտագործվել դասի ընթացքում, իսկ հետագայում նրանցով կարելի յե հարստացնել, բազմակողմանի ու պատկերավոր դարձնել ուսումնական տարեվերջի դպրոցական ցուցահանդեսը:

ԵՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԴԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Քիմիայի գասավանդման և քիմիական արդյունաբերության մեջ կապ պահպանելու լավագույն միջոցներից մեկը՝ դա եքսկուրսիայի կազմակերպումն է: Եքսկուրսիա կարելի յե կազմակերպել դեպի քիմիական արդյունաբերությունը, քիմիական արդյունաբերության համար հումուզի բազա հանդիսացող հանքավայրերը, քիմիական լաբորատորիա, թանգարան և պլի: Եքսկուրսիան դեպի քիմիական արդյունաբերություն՝ քիմիայի դասավանդման մեջ շատ կարելի մոմենտ է. Եքսկուրսիայի ընթացքում աշակերտները ունել պատկերացում են ստանում այն քիմիական գործողությունների մասին, վոր ավելի փոքր մասշտաբով վերարտադրվում և լաբորատորիայում: Այդ ժամանակ աշակերտների համար պարզվում է, թե ի՞նչ առանձնահատկություններ ունեն փոքր փորձանոթի մեջ կատարված և գործարանային բարդ սարքավորումներում կատարված պրոցեսները: Պարզվում է նաև տվյալ արդյունաբերության հումուզի բազան և նրա նախնական մշակման ձեւերը: Եքսկուրսիան հնարավորություն և տալիս աշակերտներին ծանոթանալու բարդ սարքավորումներին, պատկերացում կազմելու զանազան տեսակի մեքենաների և նրանց աշխատանքի տարրեր մոմենտների մասին: Նրանք ծանոթանում են գործարանի արտադրանքին, թափթփուկների ոգտագործման ձևերին և նրանց համար վերջնականապես պարզվում է արդյունաբերության տվյալ ճյուղի գերը սոցիալիստական արդյունաբերության համար:

Եքսկուրսիան դեպի քիմիական արդյունաբերություն՝ ունի նաև խոշոր դաստիարակչական նշանակություն աշակերտների համար։ Գործարանում աշակերտները շփման մեջ են մտնում բանվորների և մասնագետների հետ, տեսնում են նրանց կազմակերպված աշխատանքը, աշխատանքային բարձր դիսցիպլինան, ծանոթանում են գործարանի պլանի կատարմանը, զգում են, թե ի՞նչ խոշոր նըշանակություն ունի սոցիալիստական մրցությունը և ստախանովական շարժումը մեր յերկրի ժողովրդական տնտեսության բարձրացման և յերկրի պաշտպանության համար։ Անհրաժեշտ են նաև եքսկուրսիայի ընթացքում աշակերտներին ծանոթացնել գործարանում աշխատող բանվորների կովտովական մակարդակի բարձրացման ուղղությամբ կատարվող աշխատանքին, գործարանին կից դպրոցի, ակումբի, գրադարանի առկայությանը, և ցույց տալ, թե ինչպես բանվորներն աշխատանքից հետո սիրով հաճախում են դպրոց, գրադարան, ակումբ, աշխատում են իրենց կովտովական մակարդակի բարձրացման համար և ձգտում են դառնալ մասնագետ բանվորներ։

Եքսկուրսիա դեպի քիմիական արդյունաբերության հումութիքագում՝ հանքավայրեր, շախտեր՝ տալիս են աշակերտին պատկերացում մեր հայրենիքի հանքային հարստությունների անսպառ աղբյուրների մասին։ Այստեղ աշակերտները ծանոթանում են հանքային հարստությունների արդյունահանման ձերին՝ Գանքի նախնական մշակմանը և հարստացմանը։ Այս տիպի եկքսկուրսիայի ընթացքում աշակերտների համար պետք է պարզել նաև տվյալ հանքային տեսակի ընդհանուր պաշարը և վայրերը ԽՍՀՄ-ում, պետք են նրանց ծանոթացնել այն գիտահետազոտական աշխատանքին, վոր տարվում են մեզ մոտ նոր հանքավայրեր հայտաբերելու ուղղությամբ։ Պետք է պարզել հանքային հարստությունների ոգուագործման կարողությունը մեր յերկրում ժողովրդական կարիքների համար և նրա անընդհատ վերելքը հնգամյակների ընթացքում։

Եքսկուրսիա դեպի կենտրոնական լաբորատորիան կամ ձեռնարկության կից լաբորատորիան՝ ունի այն նշանակությունը, վոր այդտեղ աշակերտները ծանոթանում են լաբորատորիական ավելի բարդ սարքավորումներին։ Այստեղ լավագույն ձեվով ցույց են տրվում, վոր լաբորատորիայում կատարվող աշխատանքները հիմնաված են և ամփոփում են գործարանում կատարվող պրոցեսները,

այնտեղ են վորոշվում հումութիքի արժեքը, նրա վերամշակման ձևնապարհները, արտադրանքի վորակը և այլն։ Գիտահետազոտական լաբորատորիան ցույց է տալիս քիմիայի ստեղծագործական ուղին, այնտեղ պայքար է տարվում արտադրանքի վորակի քարձրացման համար և մշակվում են նոր ձեվեր ու մեթոդներ՝ հումութիքը լավագույն ձեւով ոգուագործելու համար։ Եքսկուրսիայի կազմակերպումը իր նպատակին կարող է հասնել և խոշոր արդյունք տալ միայն այն ժամանակ, յերբ լավագույն ձեվով է կազմակերպված։

Եքսկուրսիայի ընթացքը կարելի յէ բաժանել յերեք հիմնական ֆունդերի՝ եքսկուրսիայի նախապատրաստում, բուն եքսկուրսիա և եքսկուրսիայից ստացած մատերիալների մշակում ու ամփոփում։ Եքսկուրսիայի նախապատրաստումը պետք է ընթանալ հետեւյալ ուղղությամբ։ Տվյալ նյութը, որինակ, ծծմբական թթվի ստացման յեղանակները և կիրառումը տեսականորեն և լաբորատոր գործնական աշխատանքների միջոցով յուրացնելուց հետո, նպատակ են դնում այցելել ծծմբական թթվի ըստացման գործարանը և այնտեղ ծանոթանալ թթվի ստացման գործարանային յեղանակին։ Այս նպատակն իրականացնելու համար դասատում մշակում է հարցեր, վորի միջոցով եքսկուրսիայի ընթացքում պետք է կատարվի հետազոտություն, հետո ինքն անձամբ այցելում է գործարան և ծանոթանում այն բոլոր հարցերին, վորոնք պետք է հետագայում աշակերաների կողմից ուսումնասիրվեն։ Նորմալ կազմակերպված եքսկուրսիան պետք է տեսվի ընդհանուր 4 ժամ, վորից 1 ժամը պետք է նվիրել եքսկուրսիայի նախապատրաստման, 2 ժամ՝ բուն եքսկուրսիայի և մեկ ժամ՝ նյութի մշակման և ամփոփման։ Յերբ դասատում արդեն հարցեր են մշակել և այցելել են գործարան, առաջիկ քիմիայի ժամը նվիրում են եքսկուրսիայի բացատրությանը, համառոտ կիրառվ պատմում են գործարանում կատարված հիմնական պրոցեսների ելության մասին և ժանոթացնում են աշխատանքների ուսումնասիրելիք հարցերին, Անհրաժեշտ են այստեղ բացարձրել, թե աշակերտները գործարանի վոր ցեխում հատկապես ինչի՛ վրա պետք է հատուկ ուղաղություն դարձնեն, ի՞նչ խնդիրներ առանձին ուղաղության առարկա դարձնեն և հետագայում մշակեն։ Անհրաժեշտ են եքսկուրսիան կազմակերպել այնպես, վոր աշակերտները վոլ միայն լսողների դերում գտնվեն,

այլ նաև կատարեն ինքնուրուցն աշխատանքներ: Դրա համար նը-
րանց առանձին ողակների բաժանելով՝ պետք է տալ վորոշ առա-
ջադրություններ եքսկուսիայի ընթացքում կատարելու համար՝
եքսկուրսիայի ժամանակ տվյալ աշակերտը կամ ողակը պարտա-
վոր է իրեն համար լրիվ կերպով պարզել առաջարկված հարցերը
այնուհետև վերցնել համապատասխան թվական տվյալներ և տե-
ղեկություններ հետագայում տանը մշակելու համար: Ողակներին
կարելի յէ հանձնարել ուսումնասիրելու այն հարցերը, վոր նա-
խորք մշակված են դասաւոլի կողմից. որինակ, տվյալ արտա-
դրության մեջ հումութի ծախսման քանակը, արտադրանքի վորա-
կը և այլն:

Եքսկուրսիայի ժամանակ ղեկավարությունն ապահովելու հա-
մար պետք է վարչել այսպես.— յեթե դասարանը բազմամարդ է,
պետք է բաժանել յերկու մասի՝ այն հաշվով, վոր միենուն դա-
սատվի ղեկավարության տակ լինեն վոչ ավելի քան 20 աշակերտ:
Հարկ յեղած ղեղքում դասատուն պետք է վերցնի իր համար մեկ
ոդիական: Ոգնական կարող է լինել կամ հարակից առարկաների
դասատուներից կամ քիմիայից ակտիվ և կարգապահ աշակերտ-
ներից մեկը: Պետք ն հանձնարել աշակերտներին իրենց հետ
վերցնել անհրաժեշտ ուսումնական մատերիալներ, ինչպես թուղթ,
մատիտ, եքսպոնատների համար արկղ և այլն, ապա նշանակել
եքսկուրսիայի ժամը և տալ գործարանի հասցեն:

Թուղթ եքսկուրսիայի հաջողության նախապայմաններից մեկը
այն է, վոր աշակերտները ժամանակին և լրիվ կազմով հավաքվեն
եքսկուրսիայի վայրը և ուսումնասիրության ընթացքում իրենց
պահեն ինչպես հարկն է: Մյուս նախապայմանը՝ եքսկուրսիայի
ընթացքում տրվելիք բացատրությունների մեթոդապես ճիշտ
կառուցումն է: Շատ ղեղքում դասատուները եքսկուրսիա յեն տա-
նում աշակերտներին առանց նախապատրաստվելու, վորի հետե-
վանքով ի վիճակի շեն լինում եքսկուրսիայի ժամանակ համապա-
տասխան բացատրություններ տալու. այդ պարտականությունը
թողնում են կատարելու գործարանի վորեւ աշխատակցի: Պարզ
է, վոր այս ղեղքում արդյունքը քիչ է լինում, վորովհետեւ տըլ-
յալ աշխատակցը կարող է շատ լավ տիրապետել գործարանում
կատարվող պրոցեսների տեխնոլոգիային, սակայն նա չի կարող
աշակերտներին հասկանալի լեզվով պատմել այն, ինչ կատար-
վում է. նա կարող է կանգ առնել այնպիսի խնդիրների վրա, վոր

անհրաժեշտ չեն, և աշքաթող անել այնպիսի խնդիրներ, վոր ու-
սումնասիրության պլանի մեջ են մտնում. կարող է գործածել ա-
շակերտների համար անհասկանալի տերմիններ, և վերջապես կա-
րող է իր զրուցը չհարմարեցնել եքսկուրսանտների ժամանակին.
Այս բոլոր դեպքերում ել աշակերտների կողմից այս կամ այն
խնդիրը պարզելու համար կառաջարկվեն բազմաթիվ հարցեր, վո-
րի հետեւալնով եքսկուրսիան կծփակվի և նպատակին չի համան:
Այս բոլորից պարզ է, վոր բացատրությունն անպայման պետք ե-
տրվի դասատիվի կողմից, այն ել այնպես, վոր լսելի լինի բոլոր
աշակերտների համար: Դասատուն պետք է կանգնած լինի կենտ-
րոնական տեղում, բոլոր աշակերտները համախմբված նրա շուրջը-
գետք ե հետեւել, վոր աշակերտները ցցրվեն և չզբաղվեն ուրիշ
խնդիրներով:

Ուսումնասիրության ընթացքում պետք է առաջ քաշել հան-
գուցային խնդիրներ, այնպես անել, վոր աշակերտները կարողա-
նան կատարվող բարդ և բազմատեսակ գործողությունների մեջ
կարելոր տարբերել յերկրորդականից և ուշադրությունը կենտ-
րոնացնել կարևոր խնդիրների շուրջը:

Գործարանի մի ցեխում բացատրությունը վերջացնելուց հետո
պետք է թույլ տալ աշակերտներին առաջարկելու իրենց հետա-
քրքրությունը հարցերը, բավարարել նրանց; ապա վերցնել համա-
պատասխան տվյալներ, եքսպոնատներ և հետո անցնել հաջորդ-
ցեխը: Մի ցեխից մյուսին անցնելը պետք է կատարվի կազմա-
կերպված ձևով՝ այնպես, վոր աշակերտները գնան միասին, հան-
գիստ, ձեռք շտան այնպիսի գործիքների, նյութերի, վոր չի թույ-
լատրվում:

Եքսկուրսիայի վերջին ետապը՝ եքսկուրսիայից ստացած մա-
տերիալների մշակումն է և վերցնական ամփոփումը: Նախքան
եքսկուրսիայի վերջին ժամը՝ աշակերտները տանը պետք է կատա-
րած լինեն այն բոլոր աշխատանքները, վոր հանձնարարել և դա-
սատում: Վերջին դասաժամին, յուրաքանչյուր ողակ հանձնելով իր-
կատարած աշխատանքը, բոլոր մատերիալները փակցվում են
պատերին, և սկսվում է եքսկուրսիայի ամփոփման աշխատանքը:
Եքսկուրսիայի ամփոփումը միաժամանակ պետք է հանդիսանա-
տվյալ թեմայի կամ տվյալ հարցի ամփոփումը: Եքսկուրսիայի

քննթացքում վերցված եքսպոնատները և մշակված մատերիալները—պատրաստված մոդելները, գծված սխեմաներն ու դիագրամները պահպառ են դպրոցում՝ տարեվերջի ցուցահանդեսի համար:

ԵՔՍԿՈՒՐՍԻԱ. ԴԵՊԻ ՅԵՐԵՎԱՆԻ ԶԵԹ-ՌՃԱՌ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանում քթարդ եթերներ և ձարպեր» թեման անցնելուց հետո նպատակ են դնում ծանոթանալու Յերևանի Զեթ-Ռճառ գործարանին, ուսումնասիրելու այնտեղ ձեթի, ոճառի և գիցերինի ստացման ձեվերը և ոգտագործումը:

Եքսկուրսիան կազմակերպված անցկացնելու և կոմբինատի աշխատանքները բազմակողմանիորեն ուսումնասիրելու նպատակով դասատուն կազմում և մոտավորապես հետեւալ ուսումնասիրելիք հարցերի ցուցակը.

1. Զեթ-Ռճառ կոմբինատի դերը ԽՍՀՄ-ի ժողովրդական տընտեսության մեջ:

2. Տեղեկություններ գործարանի անցյալի մասին (Հիմնադրման տարեթիվը, զարգացման պատկերը և այլն):

3. Արտադրության հումուզը—նրա նախապատրաստումը Հիմնական քիմիական պրոցեսի համար. ծախսման քանակը:

4. Գործարանի սարքալորումը—Հիմնական մեքենաները և աշխատանքի կարելոր մոմենտները (ելեկտրական սարքավորումներ, աշխատանքի անընդհատականություն, հակահոսանքի սկզբունքը և այլն):

5. Զեթի, ոճառի և գիցերինի ստացման տեխնոլոգիական և հիմնական քիմիական պրոցեսները:

6. Ստացված ձեթի, ոճառի և գիցերինի վորակը, քանակը և ոգտագործումը:

7. Գործարանի լաբորատորիայի՝ վորակ արտադրության կոնտրոլի՝ աշխատանքը:

8. Գործարանում աշխատող բանվորների, մասնագետների և ծառայողների ընդգրկվածությունը սոցմրցման և ստախանովական շարժման մեջ:

9. Սպասարկող պերսոնալի, հատկապես բանվորների կուտիենցաղային պայմանները:

10. Կոմբինատի հեռանկարները:

Հարցերը մշակելուց հետո դասատուն դնում է կոմբինատի

եքսկուրսիայի առթիվ համապատասխան մարմինների հետ պայմանավորվում: Տեղում անձամբ ուսումնասիրում և կոմբինատն իր կազմած հարցերի կապակցությամբ՝ առանձին ցեխերի աշխատանքը, լաբորատորիան, գործարանին կից կուլտուրական հիմնարկները և այլն: Ուսումնասիրությունը լրիվ կատարելուց հետո առաջիկա ժամը նվիրում է դեպի Զեթ-Ռճառ գործարանը կազմակերպելիք եքսկուրսիայի նախապատրաստմանը: Այդ դասաժամի ընթացքում դասատուն ընդհանուր հարցերի միջոցով հիշեցնում են աշակերտներին «Բարդ եթերներ և ձարպեր» թեման, այնուհետև հայտնում են, վոր իրենք պետք են եքսկուրսիա կազմակերպեն ղեպի Զեթ-Ռճառ կոմբինատը: Այնուհետև կազմակերպում և զըրուց 15—20 րոպե տեկողությամբ Յերեվանի Զեթ-Ռճառ կոմբինատի արդյունաբերության մասին: Բացատրում են աշակերտներին, վոր այդ կոմբինատի հումուզի բազան հանդիսանում են բամբակի կորիզը: Բամբակից անշատվելով՝ կորիզը մաքրում են և յենթարկում են նախնական մշակման: Այնուհետև միջովկը անշատում են կճեպից և փոխադրում ձեթի անշատման ցեխը, վորտեղ առանձին պրեների միջոցով ձեթը անշատվում են քուսպից, վերջինն գործարանից դուրս են տարվում վորակները Զեթի մի մասը Հայաստանից դուրս են տարվում՝ հիդրոգենիզացիայի յենթարկելու համար, մի մասը ուղարկվում և ոճառի պատրաստման ցեխը ոճառ ստանալու համար, իսկ մի մասը գործարանից դուրս են տարվում և ոգտագործվում են վորակներ սննդանյութ: Հիդրոգենիզացիայի յենթարկված ճարպը կարեվոր դեր ունի ոճառագործության մեջ: Ճարպը յենթարկելով ոճառացման, ստացվում են տեխնիկական գլիցերին և ճարպաթթու: Ստացած գլիցերինը գործարանից դուրս են տարվում, նրա մի մասը ոգտագործվում են վորակներ հումուզի պայմուցիկ նյութեր ստանալու համար, մյուս մասը վերամշակվում են և ոգտագործվում վորակներ ոճառների: Ճարպաթթուն սոդայի կամ կծու նատրիումի հետ մշակելով ստանում են ոճառ:

Այդպիսով Յերևանի Զեթ-Ռճառ կոմբինատը ԽՍՀՄ-ի ժողովրդականությունը տալիս է ձեթ՝ վորակներ սննդանյութ, գլիցերին, վորը հումուզի բազա յե հանդիսանում զանազան արդյունաբերությունների համար, ոճառ և անասնակեր: Ջրուցի մեջ նշվում են գործարանին կից լաբորատորիայի առկայությունը և նրա աշխատանքը: Ջրուցի հետո կարդացվում են դասատվի կազմած հար-

ցացուցակը, բացատրվում ե առանձին հարցերի նպատակը և ի-
մաստը: Այնուհետև անցնում են կազմակերպչական խնդիրների:
Վերը նշված ճեղով դասատում աշակերտներին բաժանում ե ողակ-
ների, տալիս ե համապատասխան առաջադրություններ՝ եքսկուր-
սիայի ընթացքում ուսումնասիրովթյուններ կատարելու համար:
Այնուհետև ընտրում ե իր համար ոգնական, հայտնում ե եքսկուր-
սիայի որը և գործարանի հասցեն (հասցեն հայտնվում է, վոր ա-
շակերտը ուշանալու դեպքում կարողանա գտնել գործարանը): Ա-
շակերտական ողակներին, համաձայն տրված առաջադրություննե-
րի, հանձնարարվում ե վերցնել սրվակներ՝ ձերի, քուսպի, ոճառի,
կիցերինի նմուշներ վերցնելու համար՝ և թուղթ ու մատիտ՝ թւ-
վական տվյալներ գրանցելու համար:

Եքսկուրսիան կատարելուց հետո աշակերտներին հանձնարար-
վում ե կազմել գործարանի տարեկան արտադրանքի դիագրամն
այն իմաստով, վոր պարզվի, թե յերեք հնգամյակների ընթաց-
քում ինչպես ե բարձրացել արտադրանքը: Այնուհետև հանձնա-
րարվում ե գծագրել սարքավորումներից վորեմ մաս, կատարել
հումքի ծախսման արտադրանքի քանակի տեսական հաշվում-
ներ և արդյունքը համեմատել գործարանում ստացված արտադրան-
քի քանակի հետ: Եքսկուրսիայից հետո հաջորդ դասաժամին,
ցուցադրելով գործարանից վերցրած նմուշները, կատարվում ե
ամփոփում, յուրաքանչյուր ողակ 5—6 բոպե ժամանակամիջոցում
պատմում ե իրեն հանձնարարված հարցի ուսումնասիրման ար-
դյունքների մասին, ցուցադրում ե իր վերցրած նմուշները, թվա-
կան տվյալները, հաշվումներն ու յեղակացությունները: Այս ճեղով
բոլոր ողակները հաշվետու լինելուց հետո, դասատուն հարցեր և
առաջադրում դասարանին կամ ցանկացած աշակերտին և վեր-
ջում ինքն ամփոփում ե: Այսպիսով «Բարդ կերպներ և հարպեր»
թեմայի ուսուցումը համարվում ե ավարտված:

Եքսկուրսիայի ընթացքում վերցրած բոլոր տեսակի նմուշնե-
րը, թվական տվյալները, գծագրները և հաշվումները խնամքով
պահպան են քիմիական լաբորատորիայում և հետագայում ոգտա-
գործվում ե այդ նույն թեման կրկնելու ժամանակ, իսկ հետո լա-
վագույն նյութ ե ծառայում տարեվերջի դպրոցական ցուցահան-
դեսի համար:

ԿԻՆՈ ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ԴԵՐԸ ՔԻՄԻԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՅԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԿԱՌ ՍՏԵՂՇԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Մի շաբաթ առանձնատկությունների շնորհիվ կինոն նպաս-
տում ե աշակերտների դիտողական ունակությունների զարգաց-
մանը: Սակայն այստեղից չի բղխում, թե կինոն կարող ե մթագնել
մյուս դիդակտիկ մատերիալաները, կամ կարող ե փոխարինել ու-
սուցման մյուս մեթոդներին: Առարկան շատ ավելի հասկանալի
կդառնա և յուրացման մակարդակը՝ ավելի բարձր կլինի այն
ֆաւմանակ, յերբ ուսուցման ընթացքում բազմատեսակ մեթոդներ
գործադրուեն:

Կինոֆիլմի ցուցադրումը դասավանդման ընթացքում ունի
նաև խոշոր դաստիարակչական նշանակություն. աշակերտները
կինոնկարի միջոցով հնարավորություն կունենան դիտելու վոլ մի-
այն արդյունաբերական առանձին ճյուղեր, այլ նաև զանազան
ձյուղերի որդանական կապը, նրանք կտեսնեն, թե ինչպես
ԽՍՀՄ-ում իրականանում ե արդյունաբերության կոմբինացումը,
չայն հնարավորություններ են ստեղծվում ոգտագործելու արտա-
գործյան թափթփուկները, վորից հսկայական շափով շահում ե
քիմիական արդյունաբերությունը: Աշակերտները կինոյի միջոցով
պատկերացում կկազմեն մեր յերկրի հանգային հարստություննե-
րի մասին, կծանոթանան արդյունաբերության մեջ աշխատող
քանլուների և մասնագետների աշխատանքի բնույթին ու պայ-
մաններին:

Չուտ քիմիական ձևափոխությունները և քիմիական յերևույթ-
ներն իրենց յուրահատկության հետևանքով հնարավոր չե ցուցա-
դրել կինոժամականի վրա: Քիմիական փոփոխությունները պետք
ե ուսումնասիրիլին և աշակերտների համար սեփականություն
դառնան բազմատեսակ եքսպերիմենտների միջոցով: Աշակերտը
պետք ե տեսնի կոնկրետ նյութը և հետևի նրա հետ կատարված
փոփոխություններին. նա պետք ե դիտի ընթացող ամբողջ պրոցե-
սը, վոր կարողանա կոնկրետ յեղակացություններ հանել: Քիմիա-
կան փոփոխությունների նկատմամբ բոլոր տեսակի դիդակտիկ
մատերիալաները, վորոնց թվում նաև կինոն, չեն կարող ճիշտ գտ-
ղափար տալ այն պրոցեսների մասին, վոր տեղի յեն ունենուա
նյութը քիմիական փոփոխության յենթարկելու ժամանակ: Այս-

պիսով պարզ և վորոշակի կարելի յե ասել, վոր եկրանի վրացուց տալ վորոնե քիմիական յերեսով հնարավոր չե: Սակայն դրա կողքին կինոն անփոխարինելի միջոց և աշակերտներին արդյունաբերության զանազան ճյուղերին ծանոթացնելու և այնտեղ կատարված տեխնոլոգիական պրոցեսները դիտելու համար:

Քիմիայի դասընթացի վորոշ գլուխներ անցնելիս՝ ինչպես՝ մետաղների արդյունաբերությունը, կերակրի աղի և քլորի ստացումը, և ՍՀՄ-ի քիմիացումը, ֆոսֆոր և պարարտանյութեր, — կինոյի ոգոնությամբ լավագույն կերպով կարելի յե աշակերտներին գաղափար տալ և ՍՀՄ-ի հանքային հարստությունների մասին, դոմնային կամ մարտենյան վառարանների ու նրանց մեջ կատարվող գործողությունների մասին: Կինոյի նշանակությունն այս տեսակետից շատ մեծ ե, վորովճետե նրա միջոցով հնարավոր և այս կամ այն պրոցեսը դիտել դինամիկ վիճակում, կատարման ընթացքում: Որինակ՝ անվիճելի յե, վոր շատ ավելի կենդանի կլինի դասն այն ժամանակ, յերբ յերկաթահանքերի վերամշակման մասին պատմելիս՝ փոխանակ պատին փակցնելու դոմնային վառարանի գծագիրը և նրա վրա պատմելու կատարվող գործողությունները, ցուց տալ նույն պրոցեսները պատկերող կինո ֆիլմ, վորտեղ աշակերտները կարող են դիտել դոմնային վառարանի արդյունաբերության պրոցեսը, գործողության սկսումը՝ ոդամուղների աշխատանքը, ստացած շուգումի և շլակի անշատումը, բանվորների և վարպետների կատարած աշխատանքը և այլն: Կինոֆիլմի միջոցով կարելի յե ցուց տալ քիմիական արդյունաբերության նախապատրաստական հետապը: Որինակ՝ ծծը բական թթվի արդյունաբերությունն անցնելիս՝ կարելի յե ցուցագիր պիրիտի հանքավայրերը, ստացված հանքի գույնը, սաֆինացիան, փոխադրումը, այնուհետեւ պիրիտի այրման պրոցեսը, ստացված գազի հոսանքի ուղղությունը և վերջապես ստացված թթվի բաշխումը արդյունաբերության զանազան ճյուղերի մեջ:

Կինոյի միջոցով կարելի յե աշակերտներին ծանոթացնել նաև ուզմական քիմիայի արդյունաբերությանը՝ վառողի ստացման և դորժադրման, ծխածածկությների առաջացման, գաղային հարձակման և այլն: Կարելի յե աշակերտներին տեղյակ դարձնել հանքային հարստությունների արդյունահանման ձևերին և վերջապես ծանոթացնել զանազան տեխնոլոգիական պրոցեսներին, ինչպես՝ որինակ՝ ապակեգործություն, շաքարագործություն և այլն:

ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՄԻ ՇԱՐՔ ԹԵՄԱՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ

Միջնակարգ դպրոցի քիմիայի ծրագրի մի շաբք թեմաներ իշխենց բնույթով լայն հնարավորություն են ստեղծում բարձրացնելու աշակերտների գիտելիքների մակարդակը և ՍՀՄ-ի քիմիական արդյունաբերության նվաճումների ուղղությամբ: Այդ թեմաներից ե՝ քլոր, ծծումբ, աղոտ և ֆոսֆոր՝ 8-րդ դասարանից, մետաղներ՝ 9-րդ դասարանից և որպանական քիմիայի համարյա ամբողջ դասընթացքը՝ 10-րդ դասարան:

Այս թեմաներն անցնելիս պետք ե ընդգծել, վոր ՀամԿ(թ)Կ 18-րդ համագումարը և ՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման մասին ընկ. Մոլոտովի զեկուցման առթիվ ընդունված քանակներում ասված ե, «Զգալի շափով ավելացնել ծծմբական թթվի, աղոտական թթվի, ամոնյակի, արհեստական թելի և պլաստմասաների արդյունաբերությունը»:


ՀԱԼՈԳԵՆՆԵՐ

«Հալոգեններ» թեմայի ուսումնասիրության ընթացքում առանձնահատուկ տեղ պետք ե տալ քլորին և քլոր-ջրածնական թթվին, վորոնց հումուզի բազան մեր յերկրում գտնված հարուստ աղահանքերն են: և ՍՀՄ-ում աղահանքերի պաշարներից հայտնի յե Բրյանցիկի կուտակումը Ուկրաինայում, Իլեցկի կուտակումը Ռուսական, Նախիջևանի աղահանքը Կովկասում և այլն: Սրանց հետ միասին աղի հարուստ աղբյուրներ են մեր յերկրում գտնված մի քանի լճեր և ծովեր և ծովեր, ինչպես՝ Ելտոն և Բասկունչակ լճերը ստորին Վոլգայի մոտ, Կասպից, Սև և Աղովի ծովերը:

Թեմայի այս մասն անցնելիս, անհրաժեշտ ե պատկերավոր ձևով պատմել աղահանքից աղի արտահանման յեղանակի կամ լուծույթի մշակման ձևի մասին: Թեման անցնելիս պետք ե կանգ առնել կերակրի աղից աղաթթվի ստացման պրոցեսի վրա: Այս առթիվ պետք ե կատարել վոլ միայն այն գործնական աշխատանքները, վոր նշանակած են վերխովակու դասագրքում, այլ նաև աղաթթվի ստացման դեմոնստրացիոն փորձ գործարանային սինհայի գործող մողելի ոգնությամբ, վոր պատկերացված ե № 5 գըտագրում:

Աղաթթուն անցնելիս աշակերտներն առաջին անգամ առիթ

են ոմենում ծանոթանալու արդյունաբերության հետ կապ ոմենցող հարցի՝ աղաթիվի ստացման արդյունաբերական յեղանակինքանի վոր քիմիական արդյունաբերության բազմաթիվ ճյուղեր համարյա նույն ապարատուրան և նույն սկզբունքներն ունեն, ուստի հալոգենների ուսումնասիրության ընթացքում աշակերտներ



№ 5

ըլ ձեռք են բերում մի շարք կարևոր հասկացողություններ, պազերի լվացման յեղանակի, աղսորբցիայի, հակահոսանքի սկզբունքի մասին և այլն: Մանոթանում են նաև սարքավորման ըստ կը զբունքների, կոնտրոլի, չափող մասերի, պահպանող մասերի աշխատանքներին: № 1 գործող մոդելը՝ սխեման պատրաստել է Կիկի Ն 115 միջնակարգ պարոցը (տես «ХИМИЯ В ШКОЛЕ» № 5, 1937 թ.):

Մոդելը հետաքրքիր են նրանով, վոր առանձին մասերը համապատասխանում են գործարանի առանձին ցեխերին, և դասավորված են նույն հաջորդականությամբ:

Մոդելն ունի հետևյալ մասերը՝ 1) ելեկտրական վառարան, 2) սեակցիոն՝ կելղալի կոլբա, 3) ծծմբական թթու լցնելու համար կաթեցնող ձագար, 5) գազերի մաքրման ցեխ՝ կելղալի ապարատի վերադրամա (նասաղկա), 7) Ֆրիզենուսի կալոնկա (սյունակ), 8) ցելյարիուսների ցեխ՝ կիրիկի սառնարանի, 9) արտաքին խողովակներ ջրամատակարարման ցեխ՝ ձնշիչ սրվակ, 12) պատրաստի նյութերի ցեխ՝ չափող սրվակ (մենզուրկա), 4) կոնտրոլ չափող ապարատ՝ ջերմաշափ, 6) կերոսինով լցված Ս-ա ձև խողովակ, վորը ծառայում է միաժամանակ գազի ձնշումը ցույց տալու համար (մանոթետր), 11) իբրև ապահովիչ ջրային փական, վորը չի թողնում քլոր ջրածինը դուրս գաւ:

Մոդելը պատրաստված է ապակուցով պրոցեսը անընդհատ է: Ապակին հնարավորություն է տալիս պրոցեսը լավ դիտելու, պարզ յերեսում է ջրի և գազի հակահոսանքը և շատ հարմար է աշխատանքն ուղղելու և անվտանգ դարձնելու համար: Այս մոդելի առավելությունն այն է, վոր հասարակ կառուցվածք ունենալու հետևանքով հնարավոր է բոլոր դպրոցներում պատրաստել: Յեթե դպրոցում ելեկտրական հոսանք, կամ ելեկտրական վառարան չկա, կարելի յեւ սարքել սպիրտայրոցով:

Աշխատանքն սկսվում է այն ժամանակի, յերբ ապարատուրան սարքավորված է և ելեկտրական հոսանքը միացված: Կշռելով 25—30 գրամ կերակրի աղ լցնում են կոլբի մեջ: Խցանը, վորի միջից անց է կացված կաթեցնող ձագարը, ջերմաշափը և կելղալի վերադրամասը բռնելով Հորիզոնական դիրքով, ձագարի և վերադրամասի մեջ անց են կացնում մազախողովակի, այնուհետև խցանը ամրացնում են կոլբի վրա՝ այնպես, վոր մազախողովակները հասնեն մինչև կոլբի հատակը: Կելղալի կոլբը ամրացնելով շտատիվի վրա՝ վերադրամասի յեռակի (տրոյնիկ) միջոցով միացնում են սյունակի հետ, վորտեղ նախորոք լցված են կոփսի, պեմզայի կամ աղցուսի կտորներ. սրանք կարելի յեւ փոխարինել ապակա բամբակով: Այս բոլորը լցնում են այն նպատակով, վոր կոլբը գործի վորպես լվացող աշտարակ: Բաժակը լցնելով 600—800 միլիմետր ջուր, վրան ավելացնում են 5—8 կաթիլ ֆենոլֆտալեյին և մի քանի կաթիլ 5—10% -անոց ալկալիի լուծույթ՝ մինչև կարմիր գունավորման առաջանալը, Այս հեղուկով լցվում է ջրմուղ սրվակը, և բաց են թողնվում սեղմիչները, վորպեսզի ջուրն աղատ կերպով լցվի ցելարիուսները՝ այնքան, մինչև վոր մենզուրից դուրս ծորա: Այնուհետև փակվում է սեղմիչը (թուցլ հիմքային լույծույթի գունավորումն ապահովում է արտադրված քլոր ջրամատիճանը կանոնավոր կամ աղատական մեջ) կերակրի աղի և ծծմբական թթվի միջև կաշակահոսանքը): Կաթեցնող ձագարից բաց թողնելով 25—40 մ. մ. կոնցենտրիկ ծծմբական թթու (տեսակարար կշիռը 1,80) ձագարի ծորակը փակում են: Այս ընթացքում վառարանի ջերմաստիճանը պետք է բավարարի կերակրի աղի և ծծմբական թթվի միջև կատարվող ուեակցիան: Ծծմբական թթվի և կերակրի աղի փոխներգործության հետևանքով արտադրվում է քլաստ ջրածնական գազ, վորը կելղալի վերադրամասով անցնում է լվացող աշտարակի մեջ: Խոկ այնտեղից՝ մեկ սառցատնից մյուսը, վորի ընթացքում անգունանում է այնտեղ յեղած գունավոր ջուրը: Ստացված քլորա-

ջրածնական գազը լուծվեմ և ջրի մեջ և ստացվում է 14%-անոց քլորաշրածնական թթու:

Յերե դպրոցի լաբորատոր ունեցվածքը հնարավորություն չի տալիս այդպիսի մոդել սարքավորել՝ այն կարելի յէ սարքավորել ավելի հասարակ ձևով:

Կանգ առնելով քլորի արդյունաբերության վրա պետք է անպայման բացատրել նրա ստացման արդյունաբերական յեղանաւկը և կիրառումը խաղաղ շինարարության և ուսումական արդյունաբերության մեջ, հատկապես բացատրել քլորի դերը Մթնի արդյունաբերության մեջ:


ԾՆՈՒՄԲ

Ծծումբ թեման անցնելիս դաստիում հատկապես պետք է կանգ առնի ծծմբական թթվի արդյունաբերության վրա, պետք է նշի ծծմբական թթվի հումուզի աղբյուրները՝ ծծումբ, մետաղ սուլֆիդներ, մետալուրգիական գործարաններից արտադրված գազեր և այլն: Ինչպես հայտնի յէ՝ մեզ մոտ բնական ծծմբի պաշարներ քիչ կան: Յեղած հանքավայրերից նշանավոր են Ղրիմը, Կովկասը, Ռուբեկստանը և այլն: Սակայն ԽՍՀՄ-ն հարուստ է մետաղսուլֆիդներով, վորոնցից կարելի յէ նշել Ռուբալը, Դաղախըստանը, Հայաստանը: Հատկապես մեծ նշանակություն ունի Ղարաբղաղ-գյոլ ծովածոցի նատրիումսուլֆատը, վորը լավագույն հումուզն է սոդայի և ծծմբական թթվի արդյունաբերության համար: ԽՍՀՄ-ում գործող ծծմբական թթվի յերեք գործարանները, Ստալինի անվան Կոստանտինովյան, Նեվայի, Կուցբիշևի անվան՝ Վուկեբսենսկին, 1936 թվին տվել են 365 հազար տոնն ծծմբական թթու, այսինքն 3 անգամ ավելի ցարական նուսառանի ամբողջ արդյունաբերությունից: Առաջին հնգամյակի մերջում արտադրվել են 495 հազար տոնն, իսկ 1937 թ.՝ 2.080.000 տոնն ծծմբական թթու:

Ծծմբական թթվի արդյունաբերության մասին խոսելիս պետք է մանրամասնորեն բացատրել ծծմբական թթվի ստացման գործարանային յեղանակները՝ ընդգելով նրա հիմնական մոմենտները, սկզբունքները, կատալիգատորի նշանակությունը և այլն: Դրա համար պետք է ոգտագործել կոնտակտային և կամերային յեղանակով ծծմբական թթու ստանալու գործարանային սխեմաները և մանրամասն ուսումնասիրելուց հետո հանճարական աշխատավորել աշակերտները:

Ին, վոր իրենց տեսրերում ևս՝ գծագրեն: Յեթե հնարավոր ե, պետք ե կատարել երսկուրսիա զեսպի Ալավերդու պղնձաձուկական կոմբինատը և ուսումնասիրել ծծմբական թթվի ստացումը և նրա ոգտագործումը պղնձի արջասպ ստանալու համար: Կարելի յէ լաբորատորիայում կազմակերպել ծծմբական թթվի ստացման դեմոնստրացիոն փորձ, վորը պատկերի գործարանային ստացման յեղանակը:

Այդ փորձը կատարելու համար կարելի յէ ոգտագործել շատ հասարակ սարքավորում, վորը ներկայացված են 6 գծագրում: Ինչպես հայտնի յէ՝ կամերային յեղանակով ծծմբական թթու ստանալու համար հարկավոր ե ոմենալ ծծմբային գազ, թթվածին, չոր և, վորպես կատալիգատոր, ազոտի յերկոքսիդ:



№ 6

Գր. ծծմբի փոշու խառնուրդի: Այս խառնուրդի վրա նորից ավելացնում են 10 գր. մանգան յերկոքսիդ: Փորձանոթների և գաղաքատար խողովակների միացման տեղում պետք է զնել ապակյաբամբակ, վորպեսզի փորձանոթի բերանը չխցվի, հակառակ զեպքում կարող է փորձը անհաջողության մասնվել: Գաղատար խողովակները գործով գալով փորձանոթից մտնում են Ը սրվակը, և հասնում են մինչև կեսը: Յեթե խողովակները հասնեն մինչև սրվակի հատակը, սացգած յուրի բյուրեղները կհավաքվեն սրվակի հատակին և չեն յերեված: այս գեղացում ստացված նյութն անշատվում է սրվակի պատերի վրա, վորի հետեւանքով լավ դիտելի յէ լինում: Սարքավորման մեջ Ը սրվակը հանդիսանում է պահպանիչ կամ նախազգուշական միջոց: նա արգելում է Ե փորձանոթի մեջ յեղած հեղուկի մուտքը դեպի Ը սրվակը, վորը կարող է տեղի ունենալ այն ժամանակ, յերբ Ը սրվակի ճնշումն պահպանի, Ե փորձանոթը լցնում են կոնցենտրիկ ծծմբական թթվով, վորը կատարում է ճիշտ այն դերը, ինչ գործարանում կատարում է Գելլյուսակի աշտարակը: Փորձն սկսում է նրանից, վոր Բունգենի այրիշով զանդաղորեն և զգուշ սկսում են տաքացնել Ա և Յ փորձանոթները մինչև այն ժամանակ, յերբ նկատելի յէ դառնում:

սեակցիայի սկսումը և արտադրվում ե ջրային գոլորշու, ազոտի սքսիդի և ծմբային գազի խառնուրդ: Այս փորձի արդյունքը շատ ավելի լավ ե լինում այն դեպքում, յերբ այդ խառնուրդի մեջ ազոտի սքսիդը գտնվում է ավելցուկով ամբողջ փորձի ընթացքում (ազոտաքսիդի ավելցուկը կարելի յէ նկատել նրա կինամոնագույն յերանգից): Տաքացքում դադարեցնելուց քիչ անց՝ սրվակի պատերը ծածկվում են սպիտակ «կամերային բյուրեղներով»: Այդ ժամանակ հեռացնում են ուեակցիոն սրվակը և սառչելուց հետո նրա վրա ավելացնում են ջոր՝ այնքան, վոր յեղած բյուրեղներն ամբողջովին լուծվեն: Ստացված լուծույթը ծմբական թթուն է (տես «ХИМИЯ В ШКОЛЕ» 1938 г., № 1). ծմբական թթվի հումուցիթի բազաները և ստացման արդյունաբերական յեղանակներն անցնելուց հետո պետք է մանրամասն ուսումնասիրել նրա հատկությունները, վորոնց վրա հիմնված ե նրա կիրառումը: Որինակ՝ կանգ առնելով նրա ջուր կլանելու հատկության վրա՝ ընդգծվում է, վոր այդ հատկության շնորհիվ նա գործ է ածվում գազեր չորացնելու համար և արդյունաբերության այն ճյուղերում, վորտեղ անհրաժեշտ է ուեակցիայի ընթացքում արտադրված ջուրը միջավայրից հեռացնել (պայմուցիկ նյութեր, ցելուլոյիդ, ներկեր), շնորհիվ որդանական նյութերի վրա ոմնեցած իր ազդեցության ոգտագործվում է նաև միաժեղս բարձրացնելու գոտման համար: Ուժեղ և կայուն թթու լինելու հետևանքով այն ոգտագործվում է այլ թթուներ և աղեր ստանալու համար:

Ա.ԶՈՏ ՑԵՎ ՅՈՒՍՅՈՐ

«Ազոտ և ֆոսֆոր» թեման անցնելիս պետք է կանգ առնել ազոտական թթվի, ամոնիակի և պարարտանյութերի արդյունաբերության վրա: Անհրաժեշտ ե նշել, վոր ամոնիակի սինթեզի համար ստեղծվել են նոր միջոցներ, ինչպես, որինակ, ածուխի ստորերկրյա գազացման հետեւանքով ստացված գազերի մեջ գտնված ջրածինը, վորը հասնում է 50%-ի և ոգտագործվում է ամոնիակի սինթեզի համար: Ամոնիակի արդյունաբերությունն առել է շտեմված տեմպերով, միայն յերկրորդ հնգամյակի ընթացքում այն աճել է 12 անգամ:

Ամոնիակի ստացման յեղանակն անցնելիս մանրամասն պետք է բացատրել նրա ստացման «Հաբեր Բոլցան սիստեմը», ոգտագործելով լաբորատորիայում յեղած մատերիալները և համապա-

տասխան սխեմայի գծագիրը: Անցնելով պարարտանյութերի արդյունաբերությանը՝ պետք է նշել, վոր ԽՍՀՄ-ի սոցիալիստական մեքենայացքած գյուղատնտեսության համար պարարտանյութերի նշանակությունը հսկայական է, վորի պատճառով ամենակարգ ժամանակամիջոցում առաջին հնգամյակի ընթացքում կառուցվել են մի շարք գործարաններ, վորոնց թվին են պատկանում Բերեգնիկի—ընկ. Վորոշիլովի անվան գործարանը, Նեվայինը-Լենինգրադում, Ստալինոգորսկի՝ ընկ. Ստալինի անվան, Վուլկեսկուսկի և Կոստանտինովսկի գործարանները: Այս գործարանների համար հումուցիթի բազան մեր յերկրում գտնված հանքային հարստություններից հանդիսանում են ֆոսֆատները, ապատիտները, կալիումական աղերը, նիտրատները և ամոնիումի աղերը:

ԽՍՀՄ-ում ֆոսֆատների կուտակումներ գտնվում են Կամայի ակոմքներում (Վյատկայի), Մուկայի շրջանում (Յեգորովսկի), Ղազախստանում (Ակտյուբինսկի) և Ուլգրախնայում (Կամենեց Պոդլյակի մոտ): Վերջերս ապատիտների կուտակումների հայտնաբերվել են Կոլա թիրակղզում, Խիբինի լեռներում, այդ կուտակումներն ունեն համաշխարհային նշանակություն:

Կալիումական միացությունները հայտնաբերվել են ավելի ուշ ժամանակներում: 1927 թվին գտնվել են Կալիում գլորիդի հանքեր Կամայի ակոմքներում, վոր 5 անգամ ավելի յէ համաշխարհային կուտակումից: Այնտեղ շահագործվող հանքը յերկրորդ հնգամյակի վերջում տվել է 3 միլիոն տոնն կալիումական աղ: 1935 թվին նոր կուտակումներ են հայտնաբերվել Որենբուրգում, Իլեցկի աղային նստվածքների խավերում:

1932 թվից խորհրդային իշխանությունը դադարեցրել է պարարտանյութերի ներմուծումը, 2-րդ հնգամյակի ընթացքում գրավել ե առաջին տեղը, հետ թողնելով ԱՄՆ-ին, Ֆրանսիային, Գերմանիային և Անգլիային: Բերեզնիկի՝ ընկ. Վորոշիլովի անվան քիմիական կոմբինատը գյուղատնտեսությանը տալիս ե պարարտանյութերի բոլոր տեսակները: 1935 թ. այդ կոմբինատը տվել է 100 հազար տոնն ազոտային պարարտանյութ: Պարարտանյութ արտադրող մյուս կոմբինատը Ստալինոգորսկի քիմիական կոմբինատն է, վորը պարարտանյութերի հետ միասին արտադրում է նաև ամոնիակ և ազոտական թթու: Այս կոմբինատի նշանակությունը հասկանալու համար բավական է նշել, վոր նրա արտադրած պարարտանյութերն ոգտագործելով, յերկրի գյուղատնտեսության բերքը կբարձրանա այնքան, ինչքան կբարձրանար, յեթե

ցանքսերի տարածությունը ավելացնելին մեկ միլիոն հեկտարով՝ Վուկովսկի (Մուկվայի մոտ), Նեվսկի (Լենինգրադի մոտ) և Կոստանտինովսկի (Ռուբրախնայում) կոմբինատները պատրաստում են սուպերֆուսֆատ և այլ ֆոսֆորային պարարտանյութերը Յերկրորդ հնգամյակում Հազարամատանում գործի յեղիկել նաև մի նոր կոմբինատ, վորը նույնպես արտադրում է ֆոսֆորային պարարտանյութ:

Այսպիսով՝ յերկրորդ հնգամյակի ընթացքում պարարտանյութերի արդյունաբերությունը աճել է 18 անգամ:

Այս թեման անցնելիս աշակերտներին պետք է ծանոթացնել Հայաստանի պարարտանյութերի արդյունաբերությանը, պետք է եքսկուրսիա կազմակերպել դեպի Կիրովականի քիմիական կոմբինատը՝ ուսումնասիրելու արտադրության հումուզի բազաները և արտադրանքը: Պետք է կազմել պարարտանյութերի տեսակների կոլեկցիա և պարարտանյութերի գործադրման հետեւանքով բերքի բարձրացման դիագրամներ:

ՄԵՏԱՂԵՐ

«Մետաղներ» թեման, վորը կազմում է 9-րդ դասարանի ծրագրային նյութի 40—50%-ը, անհրաժեշտ է ուսումնասիրել ավելի հանգամանորեն կանգ առնելով առանձին մետաղների տարածվածության, նրանց միացությունների և մշակման ձեվերի վրա: Անհրաժեշտ է մանրամասն բացատրել մետաղների ուժտագործումը՝ արդյունաբերության, գյուղատնտեսության մեքենայացման, յերկրի պաշտպանության և եկեղեցիքի կացիայի համար: Ինչպես հայտնի յեղ սեկ մետաղորդիան կազմում է ծանր արդյունաբերության հիմքը, առանց վորի յեր կարող կատարվել մեր յերկրի ժողովրդական տնտեսության մեքենայացումը: Մեր յերկիրը հարուստ է յերկաթի անսպառ հանքերով: Դրանցից կարելի յեղ նշել Կրիվոյ Ռոգը, վորտեղ յերկաթահանքի պաշարը՝ հասնում է 100 միլիոն տոննի, այստեղ 1934 թվին կառուցվել է Կրիվոյուգան մետաղածուլական գործարանը: Ղրիմի պաշարը հասնում է 3000 միլիոն տոննի, այստեղ 1929 թվին կառուցվել է Վոյկովի անվան մետաղածուլական գործարանը: Ուրալի յերկաթահանքերի պաշարը հմանում է 1500 միլիոն տոննի, 1932 թվին կառուցվել է ընկածալինի անվան Մագնիտոգորսկի մետաղածուլական կոմբինա-

տը, վորի համար ջերմային եներգիա յեն մատակարարում Կուզբասի հարուստ ածխահանքերը: Այդ յերկու հանքային հարստությունները՝ Ուրալը և Կուզբասը միանալով միմյանց ստեղծել են յերկու հսկա մետաղածուլական բազաներ՝ Մագնիտոգորսկը Ուրալում և Կուզբաները Կուզբասում, վորոնք միացած են միմյանց ճոճանակի սկզբունքով:

Հարուստ հանքավայրեր գտնվում են նաև Խուսաստանի կենտրոնական մասում, վորտեղ գտնվում են Մերձ-Ուկյան՝ Փորկումարզում, Նովո-Լիսկայի և Վորոնեժի մարզում և Նովո-Շուշյան՝ Տուլայի մարզում: Յերկաթահանքեր կան նաև Չելյաբինսկում, վորտեղ 1931 թվին կառուցվել է Չելյաբինսկի գործարանը: Վեցին տարիներու յերկաթահանքերի հարուստ պաշար գտնվել է նաև Կուրսկի մարզում:

1933 թվին ԽՍՀՄ-ն յերկաթահանքի քանակով գրավում է առաջին տեղը: Յերկաթահանքերի համաշխարհային պաշարի 55%-ը գտնվում է ԽՍՀՄ-ում, վորը 4 անգամ գերազանցում է ամբողջ Յեվրոպայի պաշարի:

Մեզ մոտ շտեսնված տեմպերով զարգանում է շուգումի և պողպատի ձուլման քանակը: 1937 թվին ձուլվել է 14,5 միլիոն տոնն շուգում, իսկ 1942 թվին պետք է ձուլվի 22 միլիոն տոնն, վոր կազմում է 152%: Պողպատ 1937 թվին ձուլվել է 17,7 միլիոն տոնն, իսկ 1942 թվին պետք է ձուլվի 28 միլիոն տոնն, վորը կազմում է 1500%: Գլանվածք (պրոկատ), 1937 թվին ձուլվել է 13 միլիոն տոնն, իսկ 1942 թ. պետք է ձուլվի 25 միլիոն տոնն, վորը կազմում է 162%:

Գունավոր մետաղներից մեքենաշինության, ավիացիայի և եկեղեցրականության մեջ մեծ շափով գործ է ածվում պղնձը, ալյումինը, ցինկը, նիկելը և այլն: Պղնձի հարուստ հանքավայրերից հայտնի յեն Ուրալը, Կովկասը, Միջին Ասիան, Չաղախստանը, վորտեղ կառուցված պղնձածուլական կոմբինատը արտադրում է տարեկան 100 հազար տոնն պղնձ: 1937 թվին մեզ մոտ արտադրվել է 135 հազար տոնն պղնձ: Հայաստանի պղնձարդյունաբերությունը (Ալավերդի, Ղափան) 1938 թվին արտադրել է 2,5 անգամ ավելի պղնձ: 1933 թվի համեմատությամբ: Փիրդուղանում (Ղափան) հայտարերված պղնձի հսկայական պաշարներն ունեն շափազանց մեծ հեռանկարներ:

Ալլումինը արդյունաբերության մեջ խոշոր հեռանկարներ ունի. նրա հումուզի բաղան են վլխավորապես Տիխվինյան և Ռւրալյան բոքսիդները: 1932 թվից լենինգրադի մոտ Զվանկայում գործում ե Կիրովի անվան ալյումինի գործարանը, 1933 թվին գործում ե մի այլ գործարան, նույնպես Կիրովի անվան: 1937 թվին արտադրվել ե 80 հազար տոնն ալյումինիում, դրանով ԽՍՀՄ-ն բռնել ե առաջին տեղը Յելրոպայում և յերկրորդ տեղը՝ ամբողջ աշխարհում:

Մետաղներն ուսումնասիրելիս ձեռքի տակ պետք է ունենալ կարեռ հանքային տեսակների, առանձին մետաղների և համաձուլվածքների նմուշներ: Յուրաքանչյուր մետաղ անցնելուց հետո պետք ե աշակերտները կարողանան հանքային տեսակների մեջ ջոնկել տվյալ մետաղի միացությունը, իսկ մետաղների միջից՝ տվյալ մետաղը: Բազմատեսակ լաբորատոր աշխատանքների միջոցով աշակերտները պետք ե համոզվեն մետաղների ելեկտրականության և ջերմության լավ հաղորդիչ լինելուն, կռելու, կոփելու ընդունակություն ունենալուն և այլն Աշակերտները պետք ե կարողանան մետաղները միմյանցից անջատել ըստ տեսակաբար կշռի, հալման ջերմաստիճանի, ջերմահաղորդության, կարծրության և դրանց հիման վրա պատճառաբանել մետաղների և համաձուլվածքների գործածությունը: Այս թեման անցնելիս պետք ե կատարել եքսկուրսիա դեպի Ալավերդու և Ղափանի պղնձահանքերը և ուսումնասիրել Հայաստանի հանքային հարստությունները, պետք ե անպայմանորեն այցելել Ալավերդու պղնձածուլական կոմբինատը և ծանոթանալ պղնձի ձուլման պրոցեսին՝ և դոմնային վառարանի աշխատանքներին:

Պետք ե աշակերտներին հանձնարարել կազմելու մետաղների հանույթի աճման դիագրամ, մետաղների և հանքային տեսակների կոլեկցիաների կազմում, դոմնային վառարանի սխեմայի գծագրում, ԽՍՀՄ յեղած մետաղների հանքավայրերի քարտեզի գծագրում և այլն: Թե՛ այս թեման և թե՛ մյուս հանքային հարստություններն ուսումնասիրելու ընթացքում պետք ե ոգտագործել քարտեզներ՝ այն հաշվով, վոր աշակերտները կարողանան անսխալ ցույց տալ քարտեզի վրա մեր հանքային հարստությունների վայրերը;

Թված բոլոր միջոցառումների սխառեմատիկ գործադրումը միջնակարգ դպրոցում կապահովվի անհրաժեշտ կապ քիմիայի դասավանդման և քիմիական արդյունաբերության միջև և հնարավոր կլինի հասնել այն բանին, վոր «Միջնակարգ դպրոցն ավարտելու ժամանակ աշակերտներն արդեն վորոշ պատրաստություն ստացած լինեն ապագա գործնական աշխատանքների համար» (Մոլոտով):

Պատ. Խմբագիր՝ Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Տեխ. Խմբագիր՝ Հ. ԱՅՎԱԶՅԱՆ
Սրբագրիչ՝ Ս. ՇԱՀՐԱԶԵՅԱՆ



Վ. 681
Պատվեր № 647, տիրաժ 1000.

Ц 1940 թ.
АКТ № 612
Вкладн. л.

Հայկական ԽՍՀ ԺԿԽ-ին կից քերերի և ամսագրերի տպարան, Յերևան.


33244

ԳԻՆԸ 70 ԿՈՊ.

Հ Արմ.
3-48192

Տրայն ծեզոր քաղաքացին ունի մակար և այլն առ այս տարբերակությունը բարեկ պահանջման գործություն ունի պահանջման առաջնորդ աշխարհ մեջ առաջարկ : (հայոց)

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ - Ա ՀԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՈՒԹՅՈՒՆ - Ա ՀԱՅՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՈՒԹՅՈՒՆ - Ա ՀԱՅՈՒԹՅՈՒՆ



100 Բ.Բ.
ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՒԹՅՈՒՆ